

ՄԱՍԻՍ

ՀԱՅԱԹԱՅԻՆ

32րդ ՏԱՐԻ ԹԻՒ 29 (1579) ՀԱՐԱԾ, ՕԳՈՍՏՈՒ 18, 2012
VOLUME 32, NO. 29 (1579) SATURDAY, AUGUST 18, 2012




Պաշտօնաթերթ՝
Ս.Դ. Հայոց կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

ԶԱՒԱԽԹԻ ՀԱՅԵՐԸ ԱԶՆԱՒՒՐԻՆ ԿՈՉ ԿՇԵՆԵՆ՝ ԶՍԱՍԱԿՑԻԼ ԱԽԱԼՑԻՆԱՅԻ ՄԵԶ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՄԵՐՔԻՆ

Զաւախթի հայկական հասարակական կազմակերպութիւններու խորհուրդը տարածած է յայտարարութիւն մը, կոչ ընելով յախնի ֆրանսահայ երգիչ Շառլ Ազնաւուրին՝ հրաժարուելու Ախալցիսայի բերդի վերաբացման առթիւ կայսարիք համերգին մասնակցելէ եւ փոխարէնը վրաց իշխանութիւններու առջեւ հրապարակաւ բարձրացնելու ջաւախահայութեան յուղող խնդիրները:

«Սույն թուականի Օգոստոսի 16-ին Վրաստանի իշխանութիւնները նախատեսում են հիմնանորոգութից յետոյ հանդիսաւոր կերպով վերաբացել Ախալցիսայի բերդը եւ դրան մաս կազմող «Ահմետիկ» մզկիթը: Հաս վրացական լրատուածիջոցների՝ միջոցառմանը մասնակցելու է նաեւ Շառլ Ազնաւուրը, որն իրեն ուղեկցող երաժտական խմբով համերգ է տալու մզկիթի անմիջական հարեւանութեամբ գտնուող վայրում: Վրացական իշխանութիւնները Ախալցիսայում վերականգնում են թուրքական մզկիթ, սակայն շարունակում են արհամարհել հայկական Սուրբ Նշան եկեղեցին համայնքին վերադարձնելու Ախալցիսայի հայութեան եւ Վիրահայոց թեմի պահանջները, շարունակում են խոնարհուելու ու քանդուել Վրաստանի տարածքում գտնուող հայկական եկեղեցիներն ու հոգեւոր այլ յուշարձանները: Նման պայմաններում Շառլ Ազնաւուրի համերգը մեծ հարուած կը հասցնի աշխարհառչակ շանսոնիէի հեղինակութեանը ջաւախահայութեան



Փրանսահայ երգիչ
Շառլ Ազնաւուր

շրջանում: Մամնակցելով այս միջոցառմանը նա ակամայ նպաստելու է ջաւախահայութեան իրաւունքների ոտնահարման վրաց իշխանութիւնների քաղաքականութեանը», - ըսուած է յայտարարութեան մէջ:

Յայտարարութիւնը տարածած կազմակերպութիւնները այդ միջոցառումը կը զնահատում են որպէս ջաւախահայութեան նկատմամբ թուրք-վրացական հերթական դաւադրութիւն, որուն անոնք կը փորձեն մասնակից դարձնել աշխարհառչակ հայ երգիչին, հաւանաբար օգտուելով վերջինիս անտեղեակութենէն եւ իր հայրենի Ախալցիսա քաղաքին մէջ համերգով հանդէս գալու մեծ ցանկութենէն:

ԼՈՆԴՈՆԻ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ ՀԱՅԱՍՏԱՆ ՏԻՐԱՑԱՒ 3 ՄԵՏԱԼՆԵՐՈՒ



Լոնդոնի ողիմպիական խաղերուն ըմբէլ Արթուր Ալեքսանեան յաղթելով քուպացի ժաւգոն էսթրատային՝ նուաճեց պրոնցէ մետալը: Ան նախապէս յաղթած էր իր թուրք մրցակից Զենք իլտէին:

Իսկ յունա-հոռմէտական ըմբշամարտիկ Արտէն Զուլֆայեանը նուաճեց արծաթ մետալը: Իր կարծիքով իր ուսւ հակառակորդ մրցակիցը հակառինական ձեւով մարմնին իւղ քած ըլլալով տիրացած էր ոսկէ մետալին: Ողիմպիականին պրոնց մետալին տիրացաւ ծանրոր-

դուհի Հոկիսիմէ Խուրշուդեանը: 204 մասնակից երկիրներու մէջ մետալներու առիւծի բաժինն ստացաւ Զինաստան եւ ԱՄՆ-ը:

Մետալ ստացող շուրջ 70 երկիրներու մէջ Հայաստան կը հանդիսանայ 60րդ՝ ստանալով 3 մետալ:

Նշենք նաեւ որ 2008ի Պէճին կի ողիմպիական խաղերուն, Հայաստանի մարզիկները ստացած էին 6 պրոնցէ մետալներ, բոնցքամարտի, ըմբշամարտի եւ ծանրաբարձութեան մէջ:

ՀԱՅԵՐՈՒ ՀԱՅՐՈՅՈՂ ԳԻՐՔԸ ՍԿՍԱԾ Է ԲԱԺՆՈՒԻԼ ԹՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԵՐՈՒՄ ՄԵԶ

Թուրքիոյ մէջ ինթերնեթի միջոցաւ վաճառքի հանուած է թուրք ազգայնական Հալուք Քըր-ջըի «Հայեր, ժամանակը մի մոռնաք» անունը կրող եւ այլատյացութիւններու մէջ լայացիս կամաց վերաբացելու Ախալցիսայի բերդի վայրով ամբողջ ազգի մը: Գիրքին մէջ կ'օգտագործուին՝ «Հայ կոչուող թուրքի թշնամիները», «որու շուներն են հայերը» եւ այլն:

Գիրքը բաժանուած է նաեւ դպրոցներու մէջ:

Այսպիսով, «Փոխուող» եւ

ԱՌՈՂՋ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՑԱՆԿԻՆ ՎՐԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ 79-ՐԴՆ Է

Ամերիկան նշանաւոր «Պոլոմ-պըրկ» տնտեսական լուրերու գործակալութիւնը կազմած է աշխարհի 145 երկիրներու քաղաքացիներու առողջական իրաւունքների ոտնահարման վրաց իշխանութիւնների քաղաքականութեանը», - ըսուած է յայտարարութեան մէջ:

Յանկը կազմելու ժամանակ նկատի առնուած են կենաքի տելողութեան եւ մանկական մահացութեան ցուցանիշները, մահացութեան պատճառները, երեք տարիքային խումբերու մահացութեան եւ 65-ը տարիքը համելի ետք

ՈՍԿՐԱԾՈՒԾԻ ՆՈՒՐԱՏՈՒՆԵՐ ԱԱՊԱՅՈՎՈՂ
ՅԱՆՉԱԽՈՒՄԲԻ ՏԱՐԵԿԱՆ ԲԱՇԿԵՐՈՅԹԸ
ՍԱԼԲԻ ՍԱՍԿՐԵԱՆ՝ ՏԱՐՈՒԱՆ ԿԻՆԸ ԵՒ
ՏՕՔԹ ՊՈՐԻՍ ՊԱԴԱՍԱՐԵԱՆ՝ ՏԱՐՈՒԱՆ ՄԱՐԴԸ



ՏՕՔԹ ԱԳԱՋԱՆՁԵԱՆ

Կիրակի 15 Յուլիս 2012-ին երեկոյեան ժամը եօթէն մինչեւ ուշ գիշեր, ուրախութիւնն ունեցայ ներկայ գոնուելու Հայկական Ուկրածուծի Նուիրատուներ Ապահովող ABMDR-ի գօրավիդ հայ ու օտար կարգապահ հոծ բազմութեան մը առջեւ: Աչքառու էր տիրող խանդակառ, այլապէս տօնական մթնոլորտը, որ տիրեց

պանդոկին մէջ: Համանուն պանդոկի ընդարձակ եւ այլապէս գեղագարդուած հանդիսասրահը նեղ կուգար Ուկրածուծի Նուիրատուներ Ապահովող ABMDR-ի գօրավիդ հայ ու օտար կարգապահ հոծ բազմութեան մը առջեւ: Աչքառու էր տիրող խանդակառ, այլապէս տօնական մթնոլորտը, որ տիրեց

ԴԱՏԱՊԱՐՏՈՒՅԱԾ ԵՐԿԽՈՍՈՒԹԻՒՆ

ԱՐԱՄԱՔՐԱՀԱՄԵԱՆ

Ուզիղ մէկ տարի առաջ
աւարտուեց, իսկ աւելի ճիշտ՝
ընդհատուեց իշխանութիւն-ընդ-
դիմութիւն երկխօսութիւնը: Երե-
ւոյթն ինքնին նոր էր եւ չնայած
ոչ մի արդիւնքի չհանգեցրեց, որ-
պէս փորձ, վստահ եմ, իր դրական
ազդեցութիւնը կ'ունենայ մեր քա-
ղաքական մշակոյթի յետազայ
զարգացման վրայ: Ուսանելի կը
լինի, իհարկէ, նաեւ հասկանալ, թէ
ինչու է այդ առաջին փորձն անյա-
ջողութեան մատնուել:

Երկիմօսութիւնն ընդհատելու
առիթը յայտնի է՝ ՀԱԿ ակտիւիստ
Տիգրան Առաքելեանի եւ նրա ըն-
կերների հետ տեղի ունեցած միջա-
դէպը, որին կողմերը տրամագծո-
րէն հակառակ մեկնաբանութիւն
են տալիս: Եթէ խօսենք զուտ այդ
առիթի մասին, ապա իշխնութեան
մեղքն այստեղ շատ աւելի մեծ է,
քան Կոնգրէսինը: Թէեւ ես չեմ
հաւատում, որ ՀԱԿ-ի երիտասարդ-
ներն իրենց զուտապ են պահել
ոստիկանների հետ, առաւել եւս
չեմ հաւատում պաշտօնական վար-
կածին, որն արտացոլուած է
առաջին ատեանի դատարանի
վճռում: Պէտք էր տուգանել այդ
երիտասարդներին՝ մանր խուլի-
գանութեան համար եւ ամէն ինչ
աւարտել: Թէ չէ դարձրին դարի
դատավարութիւնը եւ տուեցին
անհեթեթ պատժաչափեր, որոնք
ինձ, օրինակ, աներկբայօրէն հա-
մոզում են, որ դատարանը քաղա-
քական պատուէր է կատարում:

Բայց փորձենք պատասխանել
հետեւեալ հարցին՝ եթէ չլիներ
Տիգրան Առաքելեանի գործը,
երկխօսութիւնը չէ՞ր ընդհատուի
եւ յաջողութեա՞մբ կ'աւարտուէր:
Ինձ թուում է՝ այս հարցի պատաս-
խանը բոլորին է յայտնի: ՀԱԿ-ի

Համար յաջողութիւն կը լինէին
արտահերթ նախագահական եւ
խորհրդարանական ընտրութիւնն-
երը, իսկ իշխանութեան համար՝
եթէ ոչ մի բան չփոխուէք: Եղաւ
վերջինը, բայց ցանկացած բա-
նակցութիւն արդիւնաւէս կարելի
է համարել, եթէ կողմերն իրար
ինչ-որ բան են զիջում: Սակայն
դրա համար բանակցողները պէտք
է գոնէ մի փոքր հակուածութիւն
ունենան որեւէ բան զիջելու: Այդ
տեսանկիւնից լիշենք ՀԱԿ-ի եւ
կոռլիցիայի «բանակցային դիր-
քերը»: Կոնգրէսը հակուած էր
քննարկելու նախագահի հրաժա-
րականի եւ խորհրդարանի լու-
ծարման ծրագիրը՝ քաջ գիտակ-
ցելով, որ այն անիրազործելի է:
Ընդ որում, այդ ծրագիրը հիմնա-
ւորող 86 էջանոց փաստաթղթում,
մասնաւորապէս, գրուած էր, որ
խորհրդարանը պէտք է լուծար-
ուի, որովհետեւ պատգամաւորնե-
րը, խախտելով օրէնքը, զբաղլում
են պիզնէսով: Եթէ հիմա նման
փաստաթուղթ ատեղծուէր, ՀԱԿ-ը,
հաւանաբար, կը գրէր՝ «պատգա-
մաւորները զբաղլում են ապօրինի
պիզնէսով (բացի ԲՀԿ-ից)»: Կոռ-
լիցիան առաջարկում էր քննարկել
արդար ընտրութիւններ անցկաց-
նելու խաղի կանոնները՝ շատ լաւ
իմանալով, որ այդ կանոններին չի
հետեւելու: Անկեղծութեան այսպի-
սի մակարդակով յաջողութիւն
ակնկալել երկխօսութիւնից՝ անի-
մասս է: Յաջորդ անգամ, երբ
նման նախաձեռնութիւն լինի, կող-
մերը, հաւանաբար, պէտք է մտա-
ծեն աւելի իրատեսական օրակար-
գի մասին:

նէր, երկիխօսութիւնը, միեւնոցն է,
կը տապալուէր:

ՆՈՐ ԸՆԴՀԻՄՈՒԹԵԱՆ ՊԱՅԱՆ ՀԵՂԻՆԱԿ՝ ԱՐՄԻՆԵ ՕՐԱՆԵԱՆ

Արտագաղթի ուժգնացմանը
զուգահեռ, մեզանում աւելի ու
աւելի է սրւում կադրերի, մարդ-
կացին ռեսուրսի դեֆիցիտը։ Այդ
դեֆիցիտն առկայ է բոլոր բնա-
գաւառներում՝ կառավարման
բարձրորակ մասնագետներից
սկսած, վերջացրած պրոֆեսիոնալ
լրագրողներով։ Բայց այսօր ու-
զում եմ խօսել քաղաքական հո-

մում՝ քաղաքական բոլոր ուժերի
երկակի խաղերն ու ոչ յստակ
դիրքորոշումը ամայացրին ընդ-
դիմադիր դաշտը:

Դաշտը բաց է նոր, ուժեղ,
միաձոյլ ընդդիմութեան համար:
Եթէ պահը ծիշդ որսան եւ
քայլերի յաջորդականութիւնը
ճշգրիտ հաշուարկեն, եթէ չխաբեն

Դաշտը բաց է նոր, ուժեղ, միաձոյլ ընդդիմութեան
համար: Եթէ պահը ճիշդ որսան եւ քայլերի
յաջորդականութիւնը ճշգրիտ հաշուարկեն, եթէ

սանքների ու քաղաքական գործիչների դեֆիցիտի մասին։ Թւում է՝ ինչն է շատ մեր կեանքում։ Կուսակցութիւններն ու քաղաքական գործունէութեամբ զբաղուող գործիչները, ովքեր ուղղակի պառեառեն են մասունանա։

Սակայն իրականում, երբ ու-
շադիր զննում ես, պարզում է՝
շատ աղքատիկ է մեր քաղաքական
դաշտը: Ներկապնակի մի քանի
խունացած երանգից բացի ոչինչ
չկայ: Ո՞վ կարող է ժխտել, որ
այսօր մեր քաղաքական դաշտում
ուժեղ, յստակ կողմնորոշմամբ,
խիզախ ընդդիմութեան պակաս
կայ: Մի կողմից՝ մեր աւանդական
կասկածամտութիւնն ու բոլորի
ետեւում տարբեր «ականջներ»
փնտռելու սովորութը, միւս կող-

ԽՈՐՅՈՒԹԱՆ ԱՇԽԻԾ

ՅԱԿՈԲԲԱԴԱԼԵԱՆ

Փութինի հետ Սերժ Սարգս-
եանի մուկովեան հանդիպումը երե-
ւանեան քաղաքական շրջանակնե-
րը սպասում էին մեծ ուշադրու-
թեամբ: Այն կարծես թէ հանդիսա-
նալու էր քաղաքական աշնան ազ-
դանշանը, որ պէտք է տար Փու-
թինը Սերժ Սարգսեանի առաջ
անլուծելի խնդիրներ դնելով: Բայց,
հանդիպումից յետոյ հնչած յայ-
տարարութիւնները կարծես թէ
վկացեցին, որ խնդիրները առանձ-
նապէս «օրիգինալ» չեն եւ տեղա-
ւորում են հայուսական «աւան-
դական» յարաբերութեան ոիթմի
մէջ:

Ակնյայտ է, որ Ռուսաստանը գործի է դրել Եւրասիական ինտեղացիայի քաղաքականութեան գաղափարն ու աւելյացնում է ճնշումը Հայաստանի վրայ, բայց հանդիպումից յետոյ ստացուած տպաւորութիւնն այն է, որ Ռուսաստանը չի պահանջում այս ասել հենց այսօր կամ վաղը: Իսկ դա իր հերթին նշանակում է, որ Հայաստանի նախագահի ընտրութիւնը գոնէ տակտիկական իմաստով դուրս է գալիս Արեւմուտքի եւ Ռուսաստանի սուր դիմակացութեան շրջանակից, որի գագաթնակերպութիւնը կարող էր լինել 2013 թուականի նախագահի ընտրութիւնը:

Ուազմավարական իմաստով,
այդ գիմակացութիւնը կայ եւ թե-
րեւս ժամանակի ընթացքում աւե-
լի է խորանալու, բայց դրա տակ-
տիկական դրսեւորումները կար-
ծես թէ յետաձգում են աւելի ուշ
շրջանի, քան 2013 թուականի նա-
խագահի ընտրութիւնն է: Ի՞ւարկէ,

ներկայումս ժամանակը եւ իրադարձութիւնները շատ արագ են փոխվում եւ հնարջաւոր է ցանկացած անակնկալ, սակայն տուեալ պարագայում փաստը կարծես թէ այն է, որ Սերժ Սարգսեանի եւ Ռուսաստանի փոխյարաբերութիւնը մնացել է սովորական ռեժիմի մէջ եւ չկայ տակտիկական սուրդիմակայութիւն:

ֆաստացի ստացւում է, որ
Սերժ Սարգսեանի դէմ թէժ քաղա-
քական աշնան սպասումները որո-
շակիորէն կարող են նուազել, և թէ
իհարկէ Սարգսեանը Փութինի
հետ չի պայմանաւորուել բաներ,
որոնցից նա հետ կը կանգնի
Արեւմուտքից լուրջ աջակցութիւն
ստանալու պարագայում: Զէ որ
Սարգսեանի մրցակիցների բանա-
կի գլխաւոր ակնկալիքը Ռուսաս-
տանն է: Եթէ Արեւմուտքն աջակ-
ցում է Սարգսեանին՝ իսկ դա
առայժմ այդպէս է, եւ Սարգսեա-
նին գոնէ դէմ չէ Ռուսաստանը,
այդ դէպքում Բարգաւած Հայս-
տան-Հայ ազգային կոնգրէսի տան-
դեմի խաղի շրջանակը բաւական
նուազում է:

Կարող է արդեօք այդ տան-
դեմն այլ խաղ պարտադրել Սերժ
Մարգսեանին։ Տեսականում իհար-
կէ, բայց Կոնգրէսն ու ԲՀԿ-ն այն-
քան տարուեցին իրենց խաղով, որ
այլ խաղի գործնական հնարաւո-
րութիւնները նրանք զգալիօրէն
կորցրել են, քանի որ այդ դէպքում
դրա համար կը պահանջուի հա-
սարակական շատ մեծ աջակցու-
թիւն, ինչը տանդեմի պարագա-
լում գրեթէ բացառուում է։

Հնակ որում, չի բացառում
նաեւ այն, որ տանդեմի հնարաւո-
րութիւնները գնահատելով է Փու-
թինը հրաժարուել Սերժ Սարգս-
եանի հետ հանդիպման կոշտ հար-

յադրումներից, ամէն ինչ թողնելով «աւանդական» բնորոշումների շրջանակում եւ ընդամենը բաւարարութիւնով հաւատապահութեան այն «երդումներից», որ տուեց Սերժ Մարգմանը Մոսկուայում Ռուսաստանին արուած տնտեսաքաղաքական ռեվէրանսմերի տեսքով:

Այդ իրավիճակն ըստ էու-
թեան ձեռնտու է նաեւ Արեւմուտ-
քին, որի համար էական խնդիր է
Հայաստանում ցնցումներ եւ ապա-
կայունացում թոյլ չտալը: Ցնցում-
ների եւ ապակայունացման պարա-
գայում Ռուսաստանի յաջողու-
թիւնը երաշխաւորուած չէ, բայց
գործիքներն անկասկած դեռեւս
շատ աւելին են, քան Արեւմուտ-
քինը:

Ներկայումս Արեւմուտքը Հայաստանում վարում է իրավիճակ-ների տարբեր զարգացումների դէպ-քում ազգեցութեան մեխանիզմնե-րի այսպէս ասած դիվերսիֆիկաց-ման եւ որոշակիօրէն ունիվերսա-լացման քաղաքականութիւն:

Հստ ամենայնի, նախագահի ընտրութեան սցենարը էապէս չի տարբերուի խորհրդարանի ընտրութիւնից, բացի թերեւս այն առանձնայատկութիւններից, որ ինքնաբերաբար բխում է ձեւաչափային տարբերութիւնից։ Հայաստանում աւելի ու աւելի է ընդգծում, որ 2012-13 թուականների ընտրական փուլը դառնում է առաւելապէս տեխնիկական միջանական շրջան, եւ զործընթացների բունշարժիչը դառնում է 2013-ից յետոյ ընկած ժամանակահատուածը։ Ամենայն հաւանականութեամբ, 2013-ի համար արուած քաղաքական հաշուարկները կը լինեն շատ կարծ եւ անարդինաւէտ։

ՄԱՍԻՆ ՏԱՐԱԹԱՐԵՐ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շքանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕԶԹ. ԱՐԴԱԿ ԳԱԶԱՆՑԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻՒԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՐԱԿ ԹՈՒԹԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$225.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆ

«ԱԶԱՏ ԴԵՄՈԿՐԱՏԻԵՐ»-Ի ՑԵՌԱՑԱԾՆԵՐԸ ՄՆԱԼՈՒ ԵՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԵԶ

«Մենք բոլորս քաղաքական գործիչներ ենք, ունեք մէկը չի պատրաստում քաղաքականութիւնից դուրս գալ: Պատրաստ ենք համագործակցել ցանկացած քաղաքական ուժի հետ, որը իրօք կը դաւանի ժողովրդական արժէքներ, որի համար իրօք մարդու իրաւունքները կը լինեն բացարձակ արժէք», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց յայտարարութեան տակ ստորագրածներից կուսակցութեան վարչութեան հիմնադիրը անդամ, Հայոց համագույն շարժման երիտթեւի նախկին ղեկավար Կարէն Կարապետեանը:

Նա ցանկացաւ խօսել իրենց որոշման պատճառների մասին՝ ասելով. - «Մենք այդ ամբողջը նշել ենք յայտարարութեան մէջ, եւ եթէ «Ազատ դեմոկրատներ» կուսակցութեան գործելառը իրօք համապատասխանում է անուանը, իրօք նրանք դեմոկրատական կուսակցութիւն են, ապա լաւ կը լինի, որ հենց իրենք էլ հրապարակեն այդ յայտարարութիւնը՝ ապացուցելով իրենց դեմոկրատական լինելը»:

«Ազատ դեմոկրատներ» կուսակցութեան անդամ, Հայաստանի նախկին արտգործնախարար Ալեքսանդր Արգումանեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում իր արդէն նախկին կուսակցութիւնի հեռանալու պատճառների մասին ասաց. - «Հիմնականը խորհրդարանական ընտրութիւններին մասնակցութեան ձեւաչափն է. դժո՞հութիւնն է արտաքյայտում առ այն, որ «Ազատ դեմոկրատներ»-ը, այնուամենայնիւ, միասնական ցուցակով հանդէս եկան «Ժառանգութեան» հետ: Կուսակցութիւնը լրողների կարծիքով, պէտք էր իրաւահաւասար դաշինքով գնալ: Սա հին թեմա է, ծեծուած»:

Կարէն Կարապետեանը, մինչ-

դեռ, ասաց, որ յայտարարութեան մէջ այլ պատճառներ էլ նշուած են, բայց մանրամասնել չցանկացաւ:

Իսկ հարցին, թէ ինչու աւելի վաղ չէին լքել կուսակցութիւնը, Կարապետեանը պատասխանեց. - «Սպասում էինք, որպէսզի ամբողջովին հանդարտուեն յետքնտրական պրոցեսները, որպէսզի որեւէ շահարկման տեղիք չտար մեր յայտարարութեան վարչութիւնը»:

«Ազատ դեմոկրատներ» կուսակցութեան 8 անդամներ կուսակցութիւնից դուրս գալու մասին յայտարարութիւն էին փոխանցել կուսակցութեան վարչութիւն:

Հարցին, թէ արդեօք այդ յայտարարութիւնն անակնկալ էր իր համար, Արգումանեանն արձագանքեց. - «Հաշուուի առնելով, որ Արարատը [Չուրաբեան]՝ ՀՀՆ վարչութեան նախկին նախագահը կուսակցութիւնը, նախընտրական փուլից սկսած արդէն չէին գալիս կուսակցութիւն եւ որեւէ ակտիւ մասնակցութիւն կուսակցութեան մէջ չէն ցուցաբերել, ապա, հաւանաբար, այս որոշումը հասունանում էր»:

Իսկ հարցին, թէ հնարաւոր է, որ ինքն էլ լքել կուսակցութիւնը, Արգումանեանը արձագանքեց. - «Ինչի՞ համար. Սա նորաստեղծ կուսակցութիւն է, նոր է ձեւաւորում, իր առջեւ դրուած ինդիրները փաստորէն կարողանում է լուծել: Հազուագիւտ դէպքերից է, երբ նորաստեղծ կուսակցութիւնը կարողացել է անմիջապէս ներկայացուած լինել Ազգային ժողովում: Դա մեծ յաջողութիւն է: Այդ յաջողութեան վրայ պէտք է փորձենք կառուցել մեր ապագայ գործունէութիւնը, կարողանանք հարթակ հանդիսանալ՝ քաղաքացիական սեկտորի պահանջները ներկայացնել Ազգային ժողովում»:

Տեր.ամ-ի ճշգրտող հարցին ի պատասխան, թէ այս յանձնարարութիւնից յետով էլ Հայաստանի ազգային աւիափոխադրողը չի վերանայի իր որոշումը, «Արմատիայից» կրկնեցին՝ Superjet-100-ի շահագործումը տնտեսապէս ձեռնուուչ:

Յիշեցնենք, որ «Արմատիա»-ն առաջին Տուսաստանի Դաշնութեան կառավարութեան դեկավար Դմիտրի Մեդվեդեվը ճիշդ որոշում կը կայացնի այս հարցի շուրջ», - Տեր.ամ-ի հարցին ի պատասխան ասացին «Արմատիա»-ից:

Յիշեցնենք, որ ՎՀ.ՐՍ-Ն տեղեկացրել էր, որ ՌԴ վարչապետ Դմիտրի Մեդվեդեվի մօտ տարածաշրջանագին աւիափոխադրումների զարգացման հարցով կայացած խորհրդակցութեան արդիւնքում յայտարարուել էր, որ ՌԴ արտաքին գործերի ու արդիւնքերութեան եւ առեւտրի նախարարութիւնն ՕԱԿ բայց բաժնետիրական ընկերութեան հետ համատեղ կը զբաղուեն «Արմատիա» աւիաընկերութեան կողմից Superjet-100 օդանաւի շահագործման հարցով: Իսկ յանձնարարութեան կատարման ժամանակը՝ 15-ն է:

www.massisweekly.com

ՎԱՐՉԱՊԵՏԸ ԵՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՀԻՒՐ՝ ՍՈՒՐԻԱՐԱՅ ՓՈԶՐԻԿՆԵՐՈՒՆ

Վարչապետ Տիգրան Մարգարար Հրանուց թափառ կամ արքայի սիրիահայերի հոգու թեթևացնելու համար:



Վարչապետ Տիգրան Մարգարար Հրանուց թափառ կամ արքայի սիրիահայերի հոգու թեթևացնելու համար:

«Այս ժամանակում կամ արքայի սիրիահայերի առաջ անդամնած ժողովը 120 երեխաններ է, իսկ Տիգրան Մարգարար Հրանուց թափառ կամ արքայի սիրիահայերի ժամանական ժողովը 120 երեխաններ է, իսկ Տիգրան Մարգարար Հրանուց թափառ կամ արքայի սիրիահայերի հոգու թեթևացնելու համար:

Ողջունելով սուրբահայութիւնը՝ կամ արքայի սիրիահայերի առաջ անդամնած ժողովը 120 երեխաններ է, իսկ Տիգրան Մարգարար Հրանուց թափառ կամ արքայի սիրիահայերի ժամանական ժողովը 120 երեխաններ է, իսկ Տիգրան Մարգարար Հրանուց թափառ կամ արքայի սիրիահայերի հոգու թեթևացնելու համար:

«Այս ժամանակում կամ արքայի սիրիահայերի առաջ անդամնած ժողովը 120 երեխաններ է, իսկ Տիգրան Մարգարար Հրանուց թափառ կամ արքայի սիրիահայերի ժամանական ժողովը 120 երեխաններ է, իսկ Տիգրան Մարգարար Հրանուց թափառ կամ արքայի սիրիահայերի հոգու թեթևացնելու համար:

«Այս ժամանակում կամ արքայի սիրիահայերի առաջ անդամնած ժողովը 120 երեխաններ է, իսկ Տիգրան Մարգարար Հրանուց թափառ կամ արքայի սիրիահայերի ժամանական ժողովը 120 երեխաններ է, իսկ Տիգրան Մարգարար Հրանուց թափառ կամ արքայի սիրիահայերի հոգու թեթևացնելու համար:

«Այս ժամանակում կամ արքայի սիրիահայերի առաջ անդամնած ժողովը 120 երեխաններ է, իսկ Տիգրան Մարգարար Հրանուց թափառ կամ արքայի սիրիահայերի ժամանական ժողովը 120 երեխաններ է, իսկ Տիգրան Մարգարար Հրանուց թափառ կամ արքայի սիրիահայերի հոգու թեթևացնելու համար:

«Այս ժամանակում կամ արքայի սիրիահայերի առաջ անդամնած ժողովը 120 երեխաններ է, իսկ Տիգրան Մարգարար Հրանուց թափառ կամ արքայի սիրիահայերի ժամանական ժողովը 120 երեխաններ է, իսկ Տիգրան Մարգարար Հրանուց թափառ կամ արքայի սիրիահայերի հոգու թեթևացնելու համար:

«Այս ժամանակում կամ արքայի սիրիահայերի առաջ անդամնած ժողովը 120 երեխաններ է, իսկ Տիգրան Մարգարար Հրանուց թափառ կամ արքայի սիրիահայերի ժամանական ժողովը 120 երեխաններ է, իսկ Տիգրան Մարգարար Հրանուց թափառ կամ արքայի սիրիահայերի հոգու թեթևացնելու համար:

«Այս ժամանակում կամ արքայի սիրիահայերի առաջ անդամնած ժողովը 120 երեխաններ է, իսկ Տիգրան Մարգարար Հրանուց թափառ կամ արքայի սիրիահայերի ժամանական ժողովը 120 երեխաններ է, իսկ Տիգրան Մարգարար Հրանուց թափառ կամ արքայի սիրիահայերի հոգու թեթևացնելու համար:

«Այս ժամանակում կամ արքայի սիրիահայերի առաջ անդամնած ժողովը 120 երեխաններ է, իսկ Տիգրան Մարգարար Հրանուց թափառ կամ արքայի սիրիահայերի ժամանական ժողովը 120 երեխաններ է, իսկ Տիգրան Մարգարար Հրանուց թափառ կամ արքայի սիրիահայերի հոգու թեթևացնելու համար:

«Այս ժամանակում կամ արքայի սիրիահայերի առաջ անդամնած ժողովը 120 երեխաններ է, իսկ Տիգրան Մարգարար Հրանուց թափառ կամ արքայի սիրիահայերի ժամանական ժողովը 120 երեխաններ է, իսկ Տիգրան Մարգարար Հրանուց թափառ կամ արքայի սիրիահայերի հոգու թեթևացնելու համար:

«Այս ժամանակում կամ արքայի սիրիահայերի առաջ անդամնած ժողովը 120 երեխաններ է, իսկ Տիգրան Մարգարար Հրանուց թափառ կամ արքայի սիրիահայերի ժամանական ժողովը 120 երեխաններ է, իսկ Տիգրան Մարգարար Հրանուց թափառ կամ արքայի սիրիահայերի հոգու թեթևացնելու համար:

«Այս ժամանակում կամ արքայի սիրիահայերի առաջ անդամնած ժողովը 120 երեխաններ է, իսկ Տիգրան Մարգարար Հրանուց թափառ կամ արքայի սիրիահայերի ժամանական ժողովը 120 երե

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԶՈՐԻ ԲԱԼԱՅԵԱՆԻՆ

**ՍԱՄՈՒԵԼ ՅՈՎԱՍՏԻՔԵԱՆ,
ՊԵՌԼԻՆ, ԳԵՐՄԱՆԻԱ**

Յարգելի Զօրի Բալյանան,
Կարդալով Ձեր զրառումները,
որոնք կատարել էք այն ժամանակ,
Երբ Վահէ Աւետեանը ղեռ կենդանի
էր, երկար ժամանակ մտորում էի,
ուզում էի հասկանալ, թէ ինչն է
պատճառը Ձեր այդ ոչինչ չասող,
հարցը արմատից չքննող. Հայս-
տանում գոյութիւն ունեցող ներկա-
յիս վաստառողջ, բռնութեան, կամա-
յականութիւնների, անօրինականու-
թիւնների մթնոլորտը չքննարկող,
չմեղադրող զրառումները հրապա-
րակելու միտումը, օգուտը եւ հաս-
ցատէր:

Այստեղ ասես մտածուած
շրջանցում է այն պայմանների
մասին խօսելուց, որտեղ զոռքա-
ների եւ ոչ թէ օրէնքի իշխանու-
թիւնն է տիրում, որտեղ էլ միայն
հնարաւոր են դառնում նման այլան-
դակութիւններ: Խսկ դրանք ոչ առա-
ջինն են, ոչ էլ վերջինն են լինելու:
Այդ գրառումները «Կրոնկրետ ճշմար-
տութիւնը» չմատնանշելու, խուսա-
նաւելու, մանեւրելու փորձ է միայն:
Բայց մի տեղ չէք մեղանչում ճշմար-
տութեան դէմ, երբ գրում էք՝ «որ
ընդհանուր առմանը բոլորիս գրածն
էլ այն չէ, բոլորիս ասածն էլ այն չէ,
ինչ պէտք է»...

Այս, դա իրօք որ այլպէս է:
Ծեծի զոհ՝ ՅԵ-ամեայ ռազմա-
կան բժիշկ Վահէ Աւետեան մահա-
քունի մէջ

ինչ խօսք, շատ հեշտ է դրսից,
հեռությոց դատողութիւններ անել,
գրողին յանդիմանել իր չասած
խօսքերի համար, եւ ես ձեռնպահ կը
մնայի, եթէ ծանօթ չլինէի ձեր
անցեալին, կարդացած չլինէի ժա-
մանակին Ձեր համարձակ յօդուած-
ները, գրառումները եւ չիմանայի,
թէ որքան մեծ է եղել Ձեր աւանդը
Արցախի ազատագրական պատե-
րազմի տարիներին: Եւ ես ձեռնպահ՝
կը մնայի, եթէ բոլորի նման ես էլ
դէմ առ դէմ կանգնած չլինէի այն
սոսկալի իրական փաստի դէմ, որ
ժամանակին անհամար գոհողութիւն-
ների գնով պայքարող եւ Արցախը
ազատագրող անձիք այսօր խաղաղ
պայմաններում իրացինի են սպան-
նում եւ դրանից ահաւորը՝ կորում
են ժողովրդի շունչը, նրան տնաւեր
անում: Իրենց եւ իրենց ընտանիք-
ների համար կառուցել են պալատ-
ներ, դղեակներ եւ փառաւոր կեանք
են ստեղծել: Իսկ բացարձակ ճշմար-
տութիւն է եւ ոչ մէկի համար
զալտնիք չէ, որ նրանք այդ ամէնը
ստեղծել են ապօրինի ճանապարհով,
Հայաստանի ազգաբնակչութեան տա-
ռապանքների եւ ժողովրդի աղքա-
տացման, արտազաղթի, հայ ժո-
ղովրդի եւ Հայաստանի վտանգուած
ապագայի հաշուին: Հարիւրհազար-
բաւոր հայութեան թափառական
կեանքի, տասնեակ հազարաւոր ըն-
տանիքների քայլքաման հաշուին:
Իսկապէս, շատ աւելի հեշտ է հա-
մախմբուել երկրի եւ ժողովրդի
արտաքին թշնամիների դէմ, քան
ներսի, իսկ հայ ժողովրդի աղէտալի
պատութիւնը ցոյց է տուել որ հէնց
նրանք էլ ի վերջոյ պատճառ են
դարձել երկրի տապալմանը եւ ժո-
ղովրդի աղէտի ենթարկմանը: Շատ
քաղաքակիրթ երկրների եւ ազգու-
թիւնների մօտ նման դէպեքերում
միշտ էլ ժողովրդին պաշտպան են
կանգնել երկրի մտաւորակամութեան
լաւագոյն ներկայացուցիչները: Շատ
յաճախ բազմաթիւ զրկանքների գնով
նրանք ասել եւ պաշտպանել են

ճշմարտութիւնը, քանզի ըստ Ձեզ
«Ճշմարտութիւնը կոնկրետ է» եւ իմ
կարծիքով միակ երաշխիքը՝ երկրի
առաջընթացի եւ ժողովրդի բարօ-
րութեան։ Որտե՞ղ է կանգնած այսօր
հայ մտաւորականը, ո՞ւմ կրղին, որ
խուսափում է ճշմարտութիւնը ասե-
լուց, բայց յայտելուց։

Ստորումների տեղիք է տալիս
նաեւ, թէ դուք ինչո՞ւ էք ցանկացել
յատկապէս շեշտել, որ յանցագործ-
ների երեխանմերը որբ են ծնալու:
Այստեղ դուք բոլորովին էլ ճշդ չէք

ընսրել այդ բառախաղը, ներեղութիւն, բաց ես դա այլ կերպ անուանել չեմ կարող: Ի՞նչ է նշանակում որբութիւն, որբ լինե՞լ: Ապա ինչպէ՞ս անուանել այն տասնեակ հարիւրաւոր, եթէ ոչ հազարաւոր երեխաներին, որոնց հայրերը ստիպուած աքսորի են մեկնել: Իսկ այս դէպքում այդ երեխաների հայրերը ժամանակաւոր են բացակայել:

լու: ի հարկէ դա էլ է հարցականի
տակ: Արդեօք նրանք երբեւէ ար-
դար պատիժ կը ստանան եւ կը
բանտարկուեն: Ես էլ շատերի, չա-
սենք ամբողջ հայութեան նման,
(որովհետեւ ամբողջը ներառում է
նաեւ այս «օլիգարխներին», որոնց
համար օրէնքը իրենց անպատճե-

լիութիւնն է նշանակում, ամձեռնմծիւլութիւնը), համոզուած չեմ, որ յանցարդրծները իրենց արժանի պատիշը կը ստանան: Եթէ Հայաստանը լինէր աշխարհի գեմոկրատ եւ քաղաքակիրթ երկրների նման եւ արդարը ի՞ր տեղում լինէր, չարը՝ իր տեղում, ապա երկրի իշխանութիւնների շատ մեծ ու փոքր ներկայացուցիչներ, այսօր այնտեղ չէին լինի, որտեղ գտնուում են: Քանզի բոլորն էլ այս կամ այն չափով եւ իրենց մեթոզներով խախտել են երկրի հէնց իրենց կողմից գրուած, հաստատուած սահմանադրութիւնն ու օրէնքները, մեղանչել են իրենց կոչման ու երդման դէմ՝ որն է՝ ազնուօրէն եւ ամբողջ կարողութիւններով ծառայել հայրենիքի զարգացման, ապահովութեան եւ ժողովրդի սոցիալական բարորութեան համար...

Սգոյ թափօրի մասնակից բա-
նակալինը՝ հազարապետ Վահէ Աւետ-
եանի լուսանկարն ի ձեռին:

Եւ քանի որ իրական կացութիւնը Հայսաստամում այսօր այդպէս չէ եւ երկիրը դաստում է Հատին Ամերիկայի նախկին «բանանի հանրապետութիւն» պիտակ կրող երկրների շարքում, իսկ կոռուպցիայի առկայութեան պատճառով, նման երկրների գրեթէ վերջին շարքերում, ապա այլ բան սպասելը, միաժամանակ կը լինէր եւ գաւեշտ:

ի հարկէ, ես լաւ գիտեմ, որ
դուք եւ շատերը ինձ կը մեղադրէք,
որ ես չափազանցում եմ, բայց իմ,
եւ ոչ միայն իմ, հաւաստի ապացոյ-
ցը դա զոռքաների քանակն է
երկրում ու նրանց սեփական զին-
եալ թիկնապահների առկայու-
թիւնը։ Հապա այլ ինչպէ՞ս գնահա-
տել եւ անուանել այն երկիրը,
որտեղ էլ հնարաւոր է տարբեր
քաղաքների՝ քաղաքապետների,
մարզպանների, երբեմն բռնակա-
լութեան սահմաններին համառող ինք-
նիշխանութիւնը։ Հապա այլ ի՞նչ
անուն կարելի է տալ մի երկրի, որի
բնութիւնը անխնայ եւ անպատճիժ
թալանում եւ աւերում են որոշ
հանքատէրեր։

Որպէս ապացուց կարելի է
նշել նաև այն իրողութիւնը, որ
երկրում գոյութիւն չունի անկախ
դատարան, անկախ խորհրդարան
եւ անկախ գործադիր մարմին,

որոնք էլ կը պաշտպանէին բնակ-
չութեան շահերը փոքր ու մեծ
իշխանաւորների կամացականու-
թիւններից եւ դատաստանի առաջ
կը կանգնեցնէին իւրաքանչիւր օրի-
նազանցի, չարաշահողի, ինչ պաշ-
տօնում էլ որ նա գտնուելիս լինէր:
Եւ ես բոլորովին էլ յացտնագոր-
ծութիւն արած չեմ լինի, եթէ
ասեմ, որ ահա հէնց այդ օրգան-
ների խիստ սերտածումն է իշխա-
նութիւնների հետ, որը չարիքների
չարիքն է, իրապէս՝ մեծագոյն չա-
րիքը եւ աղէտը, որը երկրին այդ-
պէս արագօրէն դէպի զառիթափէ տանում:

Այս շարքը կարելի է այսպէս
երկար շարունակել, բայց չէ որ
դուք ինձանից ու մեր բոլորից
աւելի ծանրակրկիտ տեղեակ էք
այդ մասին։ Բայց Ձեր գրառում-
ներում դուք յամառութեամբ լրում
եւ խուսափում էք այդ բոլոր
բացասական երեւոյթները մատ-
նանշել։ «Զեղաւ եղբայր, իսկապէս
չեղաւ»։

Այստեղ տեղին է լիշել Յովհաննէս Թումանեանի՝ իր ժամանակների մի դիպուկ բնորոշում «Հառաջանք» պոէմից.

«Պրիստավի մօտ զանգատի
եմ զնում, զողի իզն իր տունն է
տանում»:

Ուրեմն էլ ինչպէս վարուի
այսօր հայ աշխատաւորը, հայ գիւ-
ղացին, հայ մայրը, հայ հայրը, հայ
դեռատի աղջիկը, հայ երիտասարդ
ուսանողը, երբ իր ժամանակները,
նրան լիշեցնում են թուժանեանի
ժամանակները, երբ ինքը երկրում
տիրող պայմանների նոյնպիսի գե-
րին է եւ որոշ անհատների ու
իշխանաւորների կամացականութիւն-
ների նոյնպիսի անգօր զոհը: Երբ
նրանք իրենց երկրում, իւրաքինի
իշխանութեան օրօք չեն կարողա-
նում մարդավայել աշխատել, արա-
րել, ապրել ու ուսանել: Ուրեմն
նրանք էլ ուրեմն մօտ գանգատի զնան:
Ուրեմն նրանք ինչպէս դիմանան եւ

դիմադրեն քաղաքակիրթ երկրների
հմայքի, փալլի կանչին:

տագէ՞՞աը։ Երեւի բոլորովին էլ չափազանցութիւն չի լինի ենթադրել, որ այսօր արդէն երկրից հեռացել են աւելի շատ մտաւորականներ եւ ուսանողներ, քան մնացել երկրում։ Հապա ինչպէ՞՞ս չի շել այն բոլոր հայ կանանց, որոնք թուրքիա, արաբական խալիֆաթներ եւ արեւմուտքի այլ երկրներ աշխատանքի են գնացել, եւ երբեմն չդիմանալով սոսկալի պաջմաններին, ընտրել են միակ ելքը, սկսել են վաճառել իրենց մարմինը։ Հայաստանի իշխանութիւնները՝ Լեռոն Տէր Պետրոսեանից մինչեւ Ռոբերտ Քոչարեան, մինչեւ Սերժ Սարգսեան եւ նրանց դրածոները պէտք է առ նուազն կարմրէին, ամաչէին նման փաստի առաջ կանոգնելով եւ եթէ դոյզն չափով այն Հայրենասիրութիւնից եւ անձնագոհութիւնից իրենց մէջ ունեն, որը

Նրանք դրսեւորեցին Արքայի պատերազմի տարիներին, ապա պէտք է որ ժամանակին հրաժարուէին իրենց պաշտօնից եւ ներեղութիւն խնդրէին հայ ժողովրդից:

Ձեզանից եւ հայ մտաւորականութիւնից սպասուում է համարձակութիւն, խոհեմութիւն, ապագայի իրական վտանգի խորը տեսողութիւն, որպէսզի դուք կանգնէք, սկսուող, սաղմնաւորուող, բայց դեռ երկչու շարժման կողքին, Ձեր հետ տարէք այնքան զգուշաւոր Պարոն Լեռոն Անանեանին, այնքան «Համարձակ» Սօս Սարգսեանին, Պերճ Ձելթունցեանին եւ այն հարիւրաւոր մտաւորականներին, ովքեր ժամանակին չտեսնուած »համարձակութիւն« ցուցաբերեցին եւ նամակ յոեցին Թուրքիայի նախագահ Աբդուլահ Գիւլին։ Ի սէր Հայութեան, ի սէր այն հայաստանցի ուսանողուհու, ով վախի մէջ է, որ չլինի, թէ մի օր ինքը անհայրենիք մնայ, ի սէր այն հարիւր հազարաւոր մերօրեայ գենոցիդ-ի գոհերի, միացէք ցուցաբարներին, սատարէք նրանց պայքարին, Ձեր համարձակ եւ ուժեղ գրչով բորբոքէք, թէ ժացընէք այն կրակը, որը որ ըոնկուել պէտք է, որը որ այնքան անհրաժեշտ է եւ հայութեան լինելիութեան երաշխիքն է լինելու։ Դուք էլ զինուորականների նման մի ոգեւորուէք փայլուն տանկերով, հեռահար հրթիոններով եւ այլ նորատեսակ զէնքերով։ Առանց ժողովրդի, դրանք չեն կարող երկրի ապահովութիւնը եւ ապագան երաշխաւորել։ Իննառևնական թուականներին հայ ժողովուրդը չունէր դրանց գոնէ մի քանի տոկոսը եւ յաղթեց։ Բոլորից աւելի լաւ դուք զիտէք, թէ ինչո՞ւ, թէ ինչպէ՞ս կատարուեց այդ...

Եւ թող գեներալ Մանուէլը
չցոխորտաց, որ «իրենք» դեռ անե-
լիք ունեն Բաքում: Այդ իրենքը
ովքե՞ր են, նա պէտք է լաւ իմանայ,
որ առանց ոգեւորուած եւ ամէն մի
զոհողութեան պատրաստ ժողովր-
դի, որին նա այսօր այդպէս չարա-
կած արհամարհում ու հարստահա-
րում է, իրենք ոչինչ են: Իսկ նրա

յոխորացը ինձ իշեցնում է կլչի-
բէջին, ով երազում էր յաջորդ օրը
ոտքերը լուանալ Սեւանում:

զւարժք, ոլդուք չըլ յանդամաց
Զեր, ինչպէս նաև ոչ մէկ հաւատաց-
եալի կրօնական զգացումները վի-
րաւորել եւ հարցականի տակ զնել.
բայց, ցաւօք, չեմ կարող չարտա-
յացուել մէկ այլ հարցի մասին, որը
մտածելու տեղիք է տալիս. Արդեօք
ի՞նչն է Զեր՝ բժշկի, բնապաշտի
վերջին տարիների ձգուման պատ-
ճառը, միտումը, Զեր գրուածքնե-
րում հարցերը անպայման կապել
մարդու, Աստծոյ, կրօնի եւ եկեղեցու
յարաբերութիւնների հետ: Դա ինձ,
մեղմ ասած, գուարճալի է թւում,
ինչպէս որ գուարճալի են թւում այն
տեսարանները, երբ Պուտինը, Ռո-
բերտ Քոչարեանը եւ Սերժ Սարգս-
եանը եկեղեցիներում մոմեր են վա-
ռակ եւ Գեղովեանու հաւանին ռաւմ:

ՎԱՐՉՈՒ ՄՐԱՇ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ԱՐԵՎԱՏՅԱՆԻ ԹԵՐԱՊԵՎՏԻԿ
ՇՈՒԱԶԱՅԻՆ (626) 797-7680

Ա. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ 125-ԱՄԵԱԿ ԲԱԳՐԱՏ ԱԻԵՏԵԱՆ - Բ. ՍԻՒՆԻՔ



ՏՈՔԹ. ԵՂԻԿ ՃԵՐԵՋԵԱՆ

Ս.Դ.Հնչակեան Կուսակցութեան
ջղուտ եւ յանդուգն ղեկավարներու
թուին կը պատկանի Բագրատ Սիւ-
նիք:

Բ. ՍԻՒՆԻՔ ծնած է Շուշի,
1875-ին:

Ուսումը կը ստանայ Թիֆլիսի մէջ, ուր 1900-ականներու սկիզբը կը միանայ Հնչակեան Կուսակցութեան: Կը մասնակցի բանուուրական-յեղափոխական շարժումներուն, որուն պատճառով կը ձերբակալուի:

Թիֆլիսի մէջ Բ. Սիւնիք կը
նշանակուր կուտակցութեան գաղտ-
նի տպարանին պատասխանատուն
(ուր կը տպուէին նաեւ ռուս թէ
վրացի եղափոխականներուն թուու-
ցիկները): Տպարանը իշխանութեան
կողմէ կը բացայատուի եւ Բ.
Սիւնիք դպրաձեալ կը բանտարկուի:

1905-ի հայ-թրքական կոլտ-
ներուն մասնակցող Հնչակեան խում-
բերը կազմակերպելու համար կը
դրկուի Զանգեզուր եւ Ղարաբաղ:
Այդ շրջանին, Հնչակեան կուսակ-
ցութեան Ե. Համազումարէն ետք՝
կը պաշտպանէ Կուսակցութիւնը
մէկ եւ միասնական պահելու տեսա-
կէտը: Կը մասնակցի Ռուսական Ա.
Յեղափոխութեան. նշանաւոր կ'ըլ-
լայ 1906 թ.ի Թիֆլիսի Մայիս 1-եան
բազմազգեան ցոյցին անոր յան-
դուզն ելոյթը: Կուսակցական քա-
ռոզչական աշխատանքներ կը տա-
նի նաեւ Պաքուի մէջ, ուր կ'օգտա-
գործէ Սիւնեցի ծածկանունը:

Օսմ. Սահմանադրութենէն ետք
կու գայ կ. Պոլիս: 1909-ին կը
մասնակցի ՍԴՀԿ կ. Պոլսոյ Զ.
Համագումարին, ուր Սապահ Գիւ-
լի, Փարամազի եւ այլոց կողքին կը
պաշտպանէ սահմանադրութեան հա-
ւատ չընծայելու եւ Կուսակցու-
թիւնը իր յեղափոխական-ընդյա-
տակեայ գործելաձեւին մէջ պահե-
լու տեսակէտը: Կը մասնակցի նաեւ
Տաճկաստանի շրջանի պատգամա-
ւորական ժողովներուն:

1909-ին, Կուսակցական գործիչները հանդամանքով կը շրջի կ. Պոլսոյ մօտակաց հայաշատ շրջան-ները:

1909-1910 ηραβές φορδήις λε^τ
χωστωσποτιψί *Σρωψηφόνης*: 1910-ΐην,
Σρωψηφόνης μέχρι λε^τ *χωστωσαράκης*
«Ψηρζής Συργήσαλβαστέρης» φρεπή-
λε^τ, ορπούν μέχρι λε^τ φρένωσατέλα^τ αγά-
μαρητκώνης, ορπούν φρένωσατέλα^τ φρένωσατέλα^τ εν
υπογήσιαλβηφόνης πιλ υπογήσιαλβηστέρης
απωνηγ σταρρωτκώνης φωτηφάρη μέρ
πινένωσαλποτι ωρητ φωτηφάρωσιονπο-
θεών μάσιφήν: «*Υέρ* ήσακωτω-
κηρηφόνερης *χωστωσαράκη* θεαφίαδ
αφέητ-γρηφέηποτθητινέρης φυσωσάεη-
νοπλέ ένη ήνδ ήσαμαρδάκη μασέλποτ, ορ-
ηρωνηφ λαμά φένωσιτ ζένη λε^τ φωτηφάρη^τ
ηρωνηγ φέηφένωσικποτθητινέρης, ένη λαμά
θέτης ήσανηφάρηλποτη ήρενηγ πιληφένωσι
ανδωσατέλητη αρρητέρηφένερης θέτηρητα-
νέρηβην, φιληρηποτέλη ένη ματρητη φωτηφάρη-
δηπληθή μέχρι, ένη αγήθη φωτηφάρη^τ
ηνδων ανδημήτη δαγήνερη ένη αρρητων-
φοπλέ». - (2) λε^τ φρέτ β. Σητινήρη:

1910-1911-ին որպէս գործիչ
կը կազմակերպէ Պուլկարիոց շրջանի
մասնաճիւղերը: Այդ տարիին երուսն
կ'աշխատակցի Կ. Պոլսոյ կուս.
ունիան՝ «Աշխատակց»:

օրկան «Ապագայ»ին:
1912-13-ին, նոյն հանգաման-
գով կը գործէ Խրիմի թերակղզիին



Ցէջ, ուր, 1913-ին, Սեփաստափոլի
Ցէջ կը ճերբակալուի եւ կը բան-
տարկուի: Այդ տարիներուն կ'աշ-
խատակցի Կ. Պոլսոյ կուս. օկան
«Նոր Աշխարհ» օրաթերթին:

1913-ին, Ս.Դ.Հ.Կ Քիոստէնչիլ
7-րդ Համագումարին կողմէ
կ'ընտրուի Կեղրոնական Վարչու-
թեան (Սապահ Գիւլ, Փարամազ,
Վարցպատ) առաջին փոխան-
դամ:

Այդ շրջանին Բ. Սիւնիք աւելի յաճախակի կ'աշխատակցի «Հնչակ»ին: Բ. Սիւնիքի գրած քաղաքական վերլուծութիւնները ուշադրութեան արժանի են այն պատճառներով, որ ան շատ շուտ կը նախատեսէ համաշխարհային պատերազմ մը ու անոր մէջ փանթուրանիզի կարեւոր գործօնը: «Ռուսաստանի հովանաւորութիւնը, ի հարկին, անակնկալների դէպքում, արտակարգ եւ շուտափոյթ օգնութեան կարող է համնիլ: Աւելցնելու է այս ամէնի վրայ նաեւ այն՝ որ Ռուսաստանը աւելի քան Անգլիան ու Ֆրանսան, որոնք մահմետական հպատակներ ունեն, շահագրգուած է թէ ներքին պետական եւ թէ արտաքին քաղաքական շահերի տեսակէտից իր դաշնակիցը ունենալ համիսլամութեան դէմ՝ որը վաղ թէ ուշ Ասիայում ցնցումներ պիտի յառաջացնի, - որպէսզի պատճառներից հարկադրուած, կամաց թէ ակամաց, Ռուսիան պիտի հայ ժողովուրդի քաղաքական շահերը պաշտպանէ: Հայաստանի ինքնավարութեան գաղափարը՝ որին արդէն համամիտ է Երբեակ Համաձայնութիւնը, պիտի վերագրել ի թիւս այլոց եւ այն հանգամանքին որ Հայաստանը ալդպիտով բաժա-

նում է Պարսկաստանն ու Փոքր
Ասիան իրարուց ու այդպիսով
նրանց երազած միութեան գաղա-
փարը սպաննում՝ ինչ որ ցանկալի
է նաեւ Ռուսաստանին, որը իր
ամենակենսական շահերի պատճա-
ռաւ բնաւ չի հանդուրժել համիս-
լամական գաղափարի գարզացման

եւ ամէն կերպ պիտի աշխատի
թիւրք ազգայնականների խան-
գարուած մտայնութեան այդ իս-
կապէս թունաւոր, մահաբոցը, արիւ-
նածարաւ մտքերը մեռցնելու չա-
րաշար կերպով».- (3) կը գրէ Բ.
Սիւնիք: Այլ յօդուածի մը մէջ ան-
նոյն միտքը զարգացնելով կը գրէ.-
«Ռուսիան չպիտի նահանջէ՝ այլ
պիտի ընդունի մարտահրատէրը:
Ռուսիան քաջ գիտէ, որ ոռուս-գեր-
մանական պատերազմից ստացուե-
լիք վնասը ամէն պարագայում
աւելի ու աւելի քիչ պիտի լինի
տնտեսական, քաղաքական եւ բա-

ըրոյական շահերի տեսակէտից՝ քան
այն, որ կարող է ստացուել Հայաս-
տանի բնաջնջման հետեւանքով՝
մօտ կամ հեռու ապագայում: Մահ-
մետական ծփացող արեւելքում Ռու-
սաստանի բնական դաշնակից եւ
հաւատարիմ յառաջապահը կարող
է լինել, եւ է, միմիայն Հայաստա-
նը, որի սպաննուելոց վերջ Ռու-
սաստանը չպիտի կարողանայ այ-
լեւս արմատապէս խափանել Մար-
մարայից մինչեւ Հնդկաստան մի
հզօրագոյն իսլամական պետութեան
գաղափարի ծաւալման ընթացքը,
եւ նրա մարմին դառնալլ ժամա-
նակի խնդիր պիտի լինի»: (4)

Փարամազի ձերբակալութենէն ետք, կեղր. Վարչութիւնը Բ. Սիւնիքը կը հրաւիրէ կեղրոնական վարչութեան լիարժէք անդամութեան: Այս կապակցութեամբ շարքին ցած կեղր. Վարչութեան շրջաբերականը ուշագրաւ է Բ. Սիւնիքին տրուած գեղուն բնութագիրով մը՝ ինչ որ սովորական չէ կուսակցական շրջաբերականներուն. Հոնկ' լուսուի.- «Կեղրոնական Վարչութեան անդամ ընկեր Փարամազի ձերբակալութելուն եւ ցարդ բանտարկուած մնալուն պատճառաւ, համաձայն կազմական ընդհանուր կանոնագրի 34-րդ յօդուածի տրամադրութեան, առաւելագոյն քուէ ստացած առաջին փոխանդամ ընկեր Սիւնիք հրաւիրուած է կեղրոնական վարչութեան անդամակցութեան: Աւելորդ կը համարենք ընկեր Սիւնիքի մասին կենսագրական տեղեկութիւններ տալը, քանի որ ամէնքիդ ծանօթ է ան, իր բարձրագոյն կրթութեամբը, զայլիլ պերճախօսութեամբը եւ կուսակցութեանս կովկասի ու Տաճկաստանի շրջաններուն մէջ կազմակերպական ու փրոփականտայի գործերուն մատուցած անգնահատելի ծառայութիւններովը, որոնց համար է.րդ Ընդհանուր Պատգամաւորական ժողովը, միաձայնութեամբ իր ընկերական յարգանքները արձանագրելէ յետոյ՝ (տե՛ս որոշումներ) ընտրած էր զայն որպէս առաջին փոխանդամ կեղրոնական վարչութեան: Յանձին ընկեր Սիւնիքի կեղրոնական վարչութեան մէջ կ'աւելնայ անխոնջ եւ երիտասարդ նոր ոյժ մը: Ընկերական ողջոյններով՝ Ս.Դ.Հ.Կ. կեղրոնական վարչութիւն Փարիզ, Յունուար 1915»: (5)

Բ. Սիւնիք Կեդր. Վարչութեան կողմէ անմիջապէս կը նշանակուի կամաւորական աշխատանքներու պատասխանատու եւ իր այդ պաշտօնով ան կը գործէ Թիֆլիսի, Փօթիի, Կարսի եւ այլ քաղաքներու մէջ: Կ'աշխատակցի Թիֆլիսի կուս. օրկան «Գաղափար»ին:

Հայաստանի Հանրապետութեան հոչակումքն ետք, Բ. Սիւնիք կը հաստատուի Երեւան եւ աշխատանք կը գտնէ արտաքին գործոց նախարարութենէն ներս: 1920 Մայիսին որպէս մասնակից հակապետական ապատաժ բոլոր թեան կը ձերբակալուի ու կը բանտարկուի:

1920 Սեպտեմբերին, ՄԴՀԿ պատուիրակութեան մը հետ Բ. Սիւնիք կը մեկնի Մոսկովա ու կը հանդիպի Լենինի հետ: Հնչակեան պատուիրակութիւնը Լենինին կը փոխանցէ «Տեղեկատուական Հաղորդում կիլիկեան Հանրապետու-

թեան իրադարձութիւններուն, Արարատեան Հանրապետութեան Արդի Վիճակին եւ Հայկական Սոցիալ Դեմոկրատական Հնչակ Կուսակցութեան Գործունէութեան Մասին « վերնագիրը կրող ընդարձակ տեղեկագիր մը: Պատուիրակութիւնը Մոսկուա կը մնայ 21 օր եւ Լենինի հետ քանի մը հանդիպումներ ունենալիք զատ կը հանդիպի նաեւ խորհրդային այլ պատասխանատուներու հետ: Թրոցքիի հետ հանդիպման ժամանակ, վերջինս, Հնչակեան Կուսակցութեան ներկայացուցած հողային պահանջները՝ որոնց թուին Ղարաբաղի կցումը Հայաստանին, կը գտնէ «ազգայնական միտումներ եւ ժամանակի ողիին անհամապատասխան քայլ: Սիւնիքի ղարաբաղեան տաճարը տնկուելով, բախման կու գայ թրոցքիի հետ: Պատուիրակութիւնը թրոցքիի բաժանմունքն ուուրս կու գայ մասսամը ը ընկճուած»: (6) Այդ օրերուն Մոսկուա գտնուող խորհրդային պաշտօնատար, մենշևելիկ ինթերնացիոնալիստներու կուսակցութեան պատկանող, Լեւոն Շանթի պատուիրակութեան որպէս խորհրդական մաս կազմած, Բ. Սիւնիքի հայրենակից եւ հին ծանօթ Ս. Լորելլի (Սուրեն Երզնկեան), այցելութիւն կու տայ Բ. Սիւնիքին՝ վերջինիս հիւրանոցային սենեակին մէջ: Լորելլի կը վկայէ թէ Բ. Սիւնիք կ'ապրէր ջղագրգիռ պահեր եւ բնաւ գոհ չէր տարուող բանակցութիւններէն: «Սիւնիքը Ղարաբաղի էր: Իր ծննդավայր զաւառի ապագան նրան յուզում էր եւ ուզում էր նրան կապուած տեսմել Հայաստանի հետ» (7), կը գրէ Ս. Լորելլի եւ Սիւնիքի մասին կ'աւելցնէ. - «Սիւնիքը սուր գրիչ էր եւ սրտամիտ գրուցակից, խօսակցութիւնը կատակներով համեմող: Ինձ նրա մէջ գրաւում էր մտքի իսկախութիւնը: Նա քաջութիւն ունէր, - հաճելի էր այդ թէ ոչ-հաճելի խօսակիցին, - ասել ինչ մտածում էր, ունենալ իր կարծիքը: Շատ մարդկանց չէ տրուած այս բանը բնութիւնից: Սիւնիքը կողմնակից էր թէ մեր երկրի համար միայն մի մանտաղը թէ տեղին է եւ թէ բնական, որի հովանու տակ ուստահայի բաղդը վերջին հարիւր տարուաւ ընթացքում եղած է ացնքան տարբեր թուրքահայ եղբայրների բաղդից» (7):

Վերադարձի ճամբուն վրայ, արդէն խորհրդացին գարձած Պաք-ուի մէջ Բ. Սիւնիք կը ձերբակալուի եւ կը փոխադրուի Պաթում, ուրկէ առաջին նաւով կը զրկուի Կ. Պոլիս (միւս ընկերներուն կ'արտօնուի ճամբան շարունակել դէպի Թիֆլիս): Բ. Սիւնիք ափ կ'ելլէ իզմիր, ուր կը գտնուէր Ֆրանսական իշխանութիւններուն կողմէ կիլիկիացին աքսորուած Սեղրակ Շահէն: Երկու գաղափարակից ընկերներ կը նախաձեռնեն իզմիրի շրջանի կազմակերպումը: 1921-ին, իզմիրի եւ շրջակացիքի մասնաճիւղերով (Պալըքէսէր, Գըրը Աղաճ, Մանիսա, Էօտէմիշ եւայլն) կը գումարուի շրջանացին պատգամաւորական ժողովով ուր կ'ընտրուի «ՍԴՀԿ Փոքր Ասիոյ եւ կիլիկիոյ կեղր.

Հ.Բ.Ը.ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐՈՒԱՆԴ ՊԱՊԱՅԵԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ «ԱԶԳԱՆՈՒԻՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՑ



Իւրաքանչիւր ամսուայ երկ-
and accessible work of reference that Dr. Eddie Yeghiyan of the University of California, Irvine undertook the painstaking process of compiling a comprehensive bibliography on the Armenian Genocide. The descendant of survivors of the massacres and deportations, Yeghiyan has not only drawn from scholarly books, articles, and print media, but has also produced lists of works published in the fields of the arts and literature, as well as in the medium of television, documentaries, and the Internet. At over a thousand pages long and the product of five years' of research, he has collated a vast and diverse array of material and presented it to the reader in a cogent and gracefully organized format. The Armenian Genocide: A Bibliography will prove to be the definitive work for reference and consultation for a new generation of scholars and individuals keen on learning about the first major humanitarian crisis of the twentieth century.

The Center for Armenian Remembrance is proud to bring the first of its kind digital archive of this vast collection of publications. The bibliography is available to the public and fully searchable at <http://www.centerar.org/bibliography/>. Visit this link, search and explore our vast archive today.

Center for Armenian Remembrance
www.centerar.org

Turkey: A Permanent Threat to Armenia

Continued from page 1

political leaders pose a danger because of what one may term Turkish Political Personality Syndrome.

This syndrome is on full display today in "modern" Turkey's constant threats, chest-beating, belligerence, malignant narcissism, hypocrisy, extortion, despotism, cruelty, crudeness, lies, broken pledges, and, of course, the use of violence. One cannot think of even one positive Turkish political quality.

The countless victims of Turkish violence down through the centuries are proof of Turkish leaders' disordered state of mind.

There is little indication that either Turkey's policies toward Armenians or their leaders' disorder will ever change. Indeed, they may grow more threatening.

Yet, Armenians still hope that Turkey will change. How to make them aware that the Turkish threat is here to stay?

Education

Young people will, of course, become the adults who conduct the political, economic, cultural, and military affairs of Armenia. They must be equipped intellectually and psychologically to deal

with Turkey.

From a young age, Armenian students must study — but not in Turkish schools — Turkish history, geo-politics, and language, and their application to present-day Armenian-Turkish relations.

The Turkish political personality and its violent and deceitful tendencies must be dissected and understood.

This is not easy, for two reasons. First, Armenians are bombarded by pro-Turkish and "reconciliation" propaganda from around the world and even by some Armenians. Second, we Armenians are unlike Turks and often have difficulty understanding their political culture.

Ultimately, future generations of Armenians will have to choose whom to believe. Will it be the allegedly "reformed, modern" Turkey? The international media that kowtows to Turkey? Countries that historically have betrayed Armenia?

Or will Armenians learn from the past and the hard-earned wisdom of their forebears?


Their decision may determine whether Armenia lives or dies.

David Boyajian is a freelance journalist. Many of his articles are archived on Armeniapedia.org.

VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքնու Տպագրութեան եւ
Հին Գիրքնու Նորոգութեան Համար
Հեռաձայնել ՎԱՀԵ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian

1870 E. Layton St. • Pasadena, CA 91104

626-354-5924 • vamedia@yahoo.com

ՓԻԹԸՐ ՊԱԼԱԳԵԱՆԻ «ԲԱԿԱՏԱԳՐԻ ՍԵՒ ՇՈՒՆՉ» ԵՒ ԱՄԵՐԻԿԱՅԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՍՈՒԹԻՒՆԸ



ԱԶԱՏՈՒՀԿԻ ՍԻՄՊՆԵԱՆ
(ԳԱԼԱՅՁԵԱՆ)

Փիթըր Պալագեան հանրածառ-
նօթ Ամերիկահայ գրագէտը հեղի-
նակն է «Ճակատագրի Սեւ Շունը»
յուշագրական հասորին: Միացեալ
Նահանգներու ՆիուՅըրզի նահան-
գի արուարձաններուն մէջ մէծած
ըլլալով, Պալագեան կը նկարագրէ
իր ընտանիքի կեանքն ու իր պա-
տանեկութեան տարիները
1950-1960ական թուականներուն:
Պալագեան ընտանիքը որեւէ խտրա-
կանութեան չէր ենթարկուած այդ
տարիներուն, քանի որ անոնք օրի-
նապահ քաղաքացիներ էին ու իրենց
արմատները Ամերիկայի մէջ կը
համեմէին մինչեւ 1903 թուականը,
երբ մեծայրիկը Պետրոս Արուս-
եանը՝ Նիույինըրզի կը հաստատ-
ուէր:

Պալագեաններու Ամերիկեան
կեանքին հետ համարկումը տեղի
ունեցած էր այն պատճառաւ, որ
ընտանիքը կարողացած էր հայկա-
կան մշակույթն ու աւանդութիւն-
ները պատշաճեցնել այդ օրերու
Ամերիկեան կեանքին հետ, այս
առնչութեամբ որոշակի դեր կա-
տարած է բողոքական միջին դա-
սակարգի կրօնա-բարոյական ար-
ժեքները։ Հայ ըլլալը ունէր իր
ծիսակատարութիւնը տունէն ներս
եւ հայ եկեղեցւոյ մէջ միայն եւ ոչ
այլ ընկերացին մարզերէ ներս։
Ընտանիքի անդամներու կեանքին

Պալագեանները Նիուճըրզիի
մէջ գտան իրենց ապահովութիւնը
որը խոտոր կը համեմատէր ցեղաս-
պանութեան պատճառած արհա-
ւիրքներուն, քանդումներուն, գաղ-
թին եւ տեղահանութեան: Պոլսոյ
պէջ Պալագեաններու տունը հրոյ
ճարակ դարձած էր, իսկ մեծ մօր
կողմէ Շէքէրլէմէճեաններու տունը
Տիարպէջիրի մէջ թալանուած,
քանդուած էլ եւ ընտանիքը խող-
խողուած: Ամերիկայի մէջ չկային
այդ խժդութիւնները, հայեր ազատ
էին պաշտելու իրենց Աստուածը,
ընտանիք կազմելու եւ զաւակներ
մէջտեղ բերելու, գործի եւ աշխա-
տանքի հետամթուտ ըլլալու, ար-
ուեստներու հանդէպ իրենց չնորհ-
քը ծաղկեցնելու: Անոնք ձերբա-
զատուած էին անմիջական անցեա-
լի արհաւերքներէն: Գաղթականու-
թեան վերջ տալով նոր արմատներ
հաստատած էին, քաղաքացիութիւն
ունէին եւ կ'ուղէին մոռնալ անցեա-
լը: Առաջին սերունդի գաղթական-
ներն էին: Անոնք կը մտաքերէին
կորսուած աշխարհը, որ ձգուած էր
հրկիզուած: Ու անոնք իրենց քար
լութեամբ կ'ողբային վիշտը իրենց
ներաշխարհին մէջ:

23 տարեկան հասակին Փիթըր
Պալագեան կը դոնէ 1913-1916
թուականի Մօրկընթառուի թուրք-
իոց դեսպանութեան շրջանին զրած
յուշերու վկայութիւնը: Ան իրազեկ
կը դառնայ այս հատորին մէջ
թուրք կառավարութեան կողմէ կա-
տարուած 1 միլիոնէ աւելի հայե-
րու սպանդին մասին: Այդ առթիւ
կը վերայացնուին իր մանկու-
թեան լիշտողութեան պատառիկնե-
րը որոնք կցկառուր կերպով քաղած
էր իր մէծ մօր պատմութիւններէն
ու ընտանիքի անդամներուն ար-
տայացտած մտքերէն: Փիթըր Պա-
լագեան Մորկանթառուի յուշերէն
հատուածներ ուզեց ընդգրկել իր
զիրքին մէջ հաւատալով անոնց
ճշմարտացիութեան: Այս ձեւով հայ
ժողովուրդի ողբերգական պատ-



մութիւնը աշխարհի ուշադրութեան առարկան դարձուց: Ուստի իր պատանեկան յուշերուն կը միացնէ հայոց ողբերգութեան դրուագները, քանի որ, զարհուրելի հայածախտ մը զինք կ'առաջնորդէր անպայմանօրէն ընդգրկել 20-րդ դարուն պատահած ողբերգութիւնը իր «Ճակատագրի Սեւ Շունը» հատորին մէջ: Բացի դեսպան Մօրկընթառի յուշագրական վկայութենէն, Փիթրը Պալագեան վերահասու եղաւ նոյն ժամանակաշրջանին իր մօրաքրոջ կողմէ պատմուած մօրենական ընտանիքի ամբողջական ողբերգութեան: Թէ իր մեծ մայրը ցեղասպանութենէն վերապրող մըն է եւ ան իր երկու աղջնակներուն հետ Սուրբիական անապատ քշուած է առանց ուտելիքի եւ ջուրի մեռնելու համար: Այդ բոլորէն անկախ անոր ամբողջ գերդաստանը ապաննուած էր:

Պալաբնամի ծաղկսերը եւ ըստանեկան պարագաները արտաք-նապէս համարկուած ըլլալով հանդերձ Ամերիկեան կենսաձեւին, իրենց տունէն ներս շատ բաներ տարբեր էին տեղացի Ամերիկացիներու սովորութիւններէն։ Անոնց կիրակնօրեաց եւ ընթրիքի սեղանները արարողութիւն էին երկար ժամերու վրաց տարածուած ընզրկելով տունը պատրաստուած համեղ ճաշատեսակներ։ Կիրակի օրերը շատ աւելի փարթամ էին սեղանները երբ Փիթը օրաքոյը ները, ծօրաքոյը ները եւ մեծմայր Նախնան ներկաց կ'ըլլալին աւանդական ճաշի արարողութեան։ Եւ ինչ նիւթեր ըսես չին խօսուեր այդ ժամերու ընթացքին իրենց առօրեաց կեանքը յուզող հարցերու շուրջ։ Սակայն մէկ բան չէր յիշատակուեր այդ ալ հայոց աղէտն էր։ Փիթը նոյնիսկ չէր լսած «սովածահ հայեր» արտայացութիւնը հայոց ծամին, ինչ որ շատ տարած-

ուած ու դիպուկի խօսք մըն էր այդ
օրերու Ամերիկեան ընկերութեան
մէջ:

«Ճակատագրի Սեւ Շունը» զրքի խորագիրը առնուած է Պալագեանի Մեծ Մօր պատմած մէկ առակէն, ըստ որուն երկու զոհեր կը մատուցուին ճակատագրի չաստուածուՀիին: Մէկը համեղ գառնուկ մըն է նուռով եւ նուշով լեցուած եւ աչքերը կարմիր սուտակներով զարդարուած, միւսը մեռած շուն մըն է բերանը լեցուած որթնոտած խնձորով մը: Ճակատագիրը կը մերժէ գառնուկը եւ կ'ընդունի շունը: Փիթըր զարմացած այս պատմութենչն եւ շփոթահար կ'արտայացտի իր զարմանքը թէ ինք չասկնար մեծ մօր այս պատմութիւններուն իմաստը եւ կը հարցնէ «ինչ է ճակատագիրը»: Մեծմայրը կ'ըսէ բաղդէ, ճակատագիր, բաղդը քու ճակատագիրդ է, ինչ որ վերապահուած է քեզի համար: Ուժ մըն է, քեզմէ մեծ ուժ մը: «Փիթըր կ'ըսէ Աստուծոյ պէս բան է»: «Ոչ եաւրի, Աստուած չէ»: Ան կը շարունակ հարցումը «հապա շունը ինչ է», մեծմայրը կը պատախանէ շունը, շունը բաղդին պատախաննէ մեզի, մարդ արարածին: Շունը մեզի յոյս կուտայ: Շունին մէջ խորհուրդ մը կայ: «Փիթըր չամոցուելով կը յարէ «ինչեր կ'ըսես Մեծմածա, խորհուրդ, յոյս, ես չեմ հասկնար»: «Երեւոյթները խաբուսիկ են» կ'ըսէ մեծմայրը այլալած Փիթըրին, «աշխարհը այն չէ ինչ դուն կը կարծես»: Երկար ատեն Փիթըրի խորհրդածութեան նիւթ կը դառնայ այս առակը, ան դժուարութիւն ունէր իր այնքան սիրելի մեծ մօր պատմած այլազան խորհրդաւոր երազները, ասացուածքները, հասկնալու թէ՝ լեզուական գետնի վրայ, թէ՝ իմաստի տեսակէտէն: Պալագեան իր մեծ մօրը փոքր տարիքէն կապուած էր: Այդ կապը բաղդորոշ դեր կատարած է իր աճումին մէջ մեծմայրն ալ բացառիկ սիրով մը կը սիրէր զինք որպէս իր առաջին թոռնիկը: Ան իր թոռնիկի ֆութպոլի խաղերով նոյնիսկ կը հետաքրքրուէր ու այդ մասին խօսակցութիւն կը վարէր յատկապէս «Եանքիներու» մասին: Ամէն Ուրբաթ Փիթըր մեծ մօր տունը կ'երթար իր մօր հետ եւ այնտեղ կ'անցնէր մեծ մօր խոհանոցին մէջ իր շաբաթավերջը: Մեծ մօր խոհանոցին մէջ փիթըր կօննէր «չչօրէքներու» պատրաստութեան եւ եփելու արարողութեան: Անիկա իր գլխաւոր հաճոյքն էր: Մէջ ընդ մէջ ալ կը լսէր մեծ մօր պատմութիւնները, յուշերը, առակներն ու երազները:

Փիթըր Պալագեանի հօրենական կողմի ընտանեկան պարագաները ապրած են Պոլսոյ մէջ, որոնք առհասարակ մտաւորականներ էին, բժիշկներ, գրական քննադատներ: Անոնց մէջ է նաեւ Գրիգորիս Եպիսկոպոս Պալագեանը «Հայկական Գողգոթան» գրքի հեղինակը: Պալագեաններու զաւակն էր Փիթըրի հայրը, որ բժիշկ էր, իսկ քոյրերը նօնան «Նիւ Եորք Թայք-զի» գրախոսականներու բաժնի խմբագիրն էր եւ գրական քննադատ, իսկ Աննան ֆրանսական գերիրապաշտ գրականութեան եւ արուեստի մասնագէտ էր եւ կը դասախոսէր Նիւ Եորքի համալսարանը: Փիթըրի մօրենական ընտա-

ՅՈՎՐԱՆՆԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԴԱՐՈՒՄԻ ՊԱՏՐԻԱՐք ՀԱՅՈՑ Կ. ՊՈԼՍՈՅ (1855-1929)

ԴՈԿՏ. ԶԱՀԵՆ Ա. ՔՀՆՅ.
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

«Աչքի առջեւ ունենալով երեք
տարիներէ ի վեր Օրմանեանի դէմ
եղած հարածանքն ու եկեղեցական
պաշտամանց արգելքը, եւ բարոյա-
կան տառապանքը զոր լուռթեամբ
քաշած է, Ազգային ժողովը կը
վճռէ ազատ կացուցանել Օրման-
եան Սրբազն իրեն դէմ եղած
բոլոր ամբաստանութիւններէն»

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԱՍՏԱՆ

Երբ եղիշէ Պատրիարք Դուռը-
եան պարտաւորուեցաւ հրաժարիլ
իր կարձատեւ գահակալութենէն,
1910 նոյեմբեր 26-էն 1911 դեկտեմ-
բեր 2, անցեր էր լման տարի մը,
եւ Կ. Պոլսոց Հայոց Պատրիարքու-
թեան Տեղապահը վահրամ Արքե-
պիսկոպոս Մանկունի ձեռնհասօրէն
կը վարէր իր պաշտօնը գաւառի
հայութեան տապնապներու ընդմէ-
ջէն խնդրանքներ եւ բողոքներ
բարձրացնելով պետական բոնու-
թեանց դէմ:

Պատրիարքի յապաղած ընտրութիւնը ի վերջոյ տեղի կ'ունենար 1911 դեկտեմբեր 2-ին, եւ նախագահութեամբ Տեղապահ Մանկունիի կ.Պոլսոյ Պատրիարք կ'ընտրուէր Պրուսայի Առաջնորդ՝ Յովհաննէս Արքեպիսկոպոս Արշարունի: Իր ընտրութիւնը Դուրեան Պատրիարքի անյաջող եւ տկարպատրիարքութենէն ետք ծանուցուեցաւ որպէս «սպեղանի եւ դարձան», որ կու գար «լեզուագիտութեամբ եւ բարձր զարգացումով» օժտուած հոգեւորականէ մը, «որ խիզախ ու անկաշկանդ նկարագրով ամէն լոյս կը ներշնչէր իրական օգտակարութեան մը՝ ներկայ դժնդակ պայմաններուն մէջ», ինչպէս զրեր էին այն ատեն «Տաճար» շաբաթաթերթի խմբագրականին մէջ:

Թողրգոմ Եպիսկոպոս Գուշակ-
եան անվարան գրեր էր նոյն ատեն
թէ նորընտիրը, Յովհաննէս Արքե-
պիսկոպոս Արշարունի, «Հայ հոգե-
ւորականութեան ամենէն մաքուր
եւ բարեխիղճ ներկայացուցիչնե-
րէն մին էր», որ սակայն ինք եւս
շատ կարծ ատեն մը վարեց պատր-
իարքութիւնը, եւ իր հրաժարու-
մին վրայ ընտրուեցաւ Արքաշի
Դպրեվանքի անդրանիկ ձեռնա-
սուններէն Զաւէն Արքեպիսկոպոս
Տէր Եղիայեան՝ ամենէն երիտա-
սարդներէն մին իր նախորդներուն
մէջ:

Նախընթացք

Արշարունի բնիկ Կ. Պոլսեցի
էր, ծնած 1855-ին եւ աւարտած
կալախաց Սերայի Լիսէն, եւ ատեն
մը ուսուցչութիւն վարելէ ետք, 24
տարեկանին, 1879 թուին, իւս-
կիւտարի Ս. Կարապետ եկեղեցւոյ
մէջ վարդապետ կը ձեռնադրուէր
Մատթէոս Եպիսկոպոս իգմիրէա-
նէ, օծակից ունենալով եղիշէ վրդ.
Դուրեան եւ Մատթէոս վրդ. Արծիւ-
եան, երեքն ալ առանց դպրեկվանքէ
մը կամ վանական հաստատութենէ
մը շրջանաւարտ ըլլալու, պարա-
գաց մը որ նոյն ինքն ձեռնադրիչ
Եպիսկոպոսին եւս կը վերաբերե-
րէր: Բոլորն ալ ինքնուսոց եւ
հաւատարիմ հոգեւորականներ
դառնալու ուխտը կատարելով ար-
դարացուցին իրենց պարտքը:
Արծիւեան վաղաճեռիկ եղած է:



առաջնորդի պաշտօնին կոչուելով
Պրուսա մեկնած է 1895 թուին եւ
թեմին վրայ եպիսկոպոս ձեռնադր-
ուած S.S. Մկրտիչ Խրիմեան Հայ-
րիկ Կաթողիկոսէն Մայր Աթոռի
մէջ: Իր Պատրիարք ընտրութեան
որպէս արժանիք ցոյց տրուած է իր
լեզուագիտութիւնը եւ դիւնագէ-
տի յատկութիւնը:

Առևտութեան Ակադեմիա Մօռ

Իր մայր եկեղեցւոյ մէջ կատարած ուխտառութենէն ետք, Արշարունի Պատրիարք դեկտեմբեր 20-ին իր պաշտօնական այցելութիւնը տուած է Սուլլիթան Ռեշատին, ուր արտասանած է իր ճառը. «Ասկէ առաջ չորս անգամ Ձեր վեհափառութեան ներկայանալու պատիւն արժանանանալով, եւ այժմ իբր Պատրիարք ընդունուելուս համար ինքզինքս բախտաւոր կը զգամ», ըսելով: Սուլլիթանը յաջողութիւնն մաղթած է եւ ըսած. «Օսմանեան գահուն հանդէպ հայոց ունեցած հաւատարմութեան վկան է պատմութիւնը», որուն Պատրիարքը պատասխանած է, «Հայ ազգն իր հաւատարմութեան մէջ անայլայլ մնացած է ու կը մնայ, եւ միշտ կ'աղօթէ Օսմանեան գահուն եւ կայսեր համար»:

Ապա Պատրիարքը թափօրով Բ.Դուռ Պապը Ալի երթալով պաշտօնական այցելութիւն տուած է վարչապետին եւ նախարարներուն: Արշարունի Պատրիարք նիւթական հասուցում պահանջած է Ալտանայի կոտորածին դիմաց, «մասնակի բաժին մը՝ տաս հազար ոսկիի գումար մը, ընթացիկ տարւոյն պիւտճէին մաս կազմէլ տալով»:

Սուլթան Ռեշատ երկու տարի ետք յաջորդ Պատրիարք Զաւէն Արքեպիսկոպոս Տ.Եղիաչեանի առաջին պաշտօնական այցելութեան ընթացքին «Հազիւ ընդունած է զինք, «մեմնիւն օլտում» բառերը միայն արտասանելով ու զինք ճամբու զնելով», ինչպէս Զաւէն Պատրիարք բառացի գրած է իր «Յուշեր» ուն մէջ: Ոչ մէկ խօսք երկուքին միջեւ: Պատճառը հաւանաբար իր դէմք կ'ելլէր շատ երիտասարդ Պատճեառը չ'ուն և էլ հանուց ոքէր:

Պատրիարք մը ու չէր հանդուրժեր: Յաջորդ օր Պատրիարքը կ'այցելէր Յունաց Տիեզերական Պատրիարք Եօաքիմ Առքեակիսկոպոսին՝ ընկերակցութեամբ Գրիգորիս Արքեպիսկոպոս Յովհաննէսեանին, Մմբատ Վարդապետ Գաղափեանին եւ ժողովականներու: Իրեն պարտք կը զգար առաջին այդ այցելութիւններէն ետք գործնական յարաբերութիւն կիրարկել եւ դիւանա-

ՕՐՄԱՆԵԱՆ ՍԱԼԱՔԻՒ ՆԱԽԱԿԻՆ ՊԱՏՐԻԱՐք

Յովհաննէս Արշարունի Պատրիարքի աւագ եւ առաջին պարտքը եղաւ անպարտ արձակել նախկին վաստակաւոր Մաղաքիա Պատրիարք Օրմանեանը, որ անարդար ամբաստանութեան տակ կը մնար չորս տարիներէ ի վեր, ակսած իզմիրլեան եւ քաշքշուած Դուրեան Պատրիարքներէն 1908 թուականէն մինչեւ 1912 Դեկտեմբեր:

Արշարունի Պատրիարք Պոլ-
սոյ Ազգային Կեղըռնական Վար-
չութեան 1912 Դեկտեմբեր 21-ի
նիստին որդեգրել տուաւ ազգային
երեափոխան Գրիգոր Զոհրապի հե-
տեւեալ բանաձեւը եւ անպարտ
արձակեց Օրմանեան Սրբազնը:
«Ազգային Երեափոխանական Ժո-
ղովը Օրմանեան Սրբազնի դէմ
եղած ամբաստանութեանց համար
կազմուած Յանձնաժողովին եւ Ասե-
նապետաց Դիւանին տեղեկազիր-
ները ուշադրութեան առնելի եւ
ամբաստանութեան ու դատապար-
տութեան մասին փաստեր լսելիք
վերջ, կը վճռէ ազատ կացուցանել
Օրմանեան Սրբազնը իրեն դէմ
եղած բոլոր ամբաստանութիւննե-
րէն»:

Սոյն բանաձեւը կը հիմնուէր
մէջքերուած երեք հարցերուն վրայ
որոնք զիսաւոր պատճառը եղած
էին կարծեցեալ ամբաստանութեան։
1) Մահմանադրութեան կէտ առ
կէտ չպործադրուիլը. 2) Ազգին
ցաւերուն անկարեկիր գտնուած
ըլլալը. 3) Լահէց ուղղած իր հեռա-
գիրը։ Տեղեկագիրը քննած է իւրա-
քանչիւրը եւ Օրմանեան Սրբազ-
նի ի նպաստ որոշում կայցացուցած,
անձիշդ եւ անարդար գտնելով
անոնց բովանդակութիւնը։ Վճիռը
կ'ըսէր՝

«Աչքի առջեն ունենալով երկք
տարիներէ ի վեր Օրմանեանի դէմ
եղած հալածանքն ու եկեղեցական
պաշտամանց արգելքը եւ բարոյա-
կան տառապանքը զոր լուռթեամբ
քաշած է, Ազգային ժողովը կը
վճռէ ազատ կացուցանել Օրման-
եան Սրբազն իրեն դէմ եղած
բոլոր ամբաստանութիւններէն»:
Ճմմտ. Ս. Զէրքէզեան, Օրմանեանը
Զրպարտութեան Յանցերում, Թիֆ-
լիս, 1911, Արգումանեան, Ազգա-
պատում Դ հատոր Ա գիրք, յօդ.
3214: Օրմանեան պատուով կը վե-
րադառնայ զործի եւ պաշտօններու
կը հաւիրուի;

Գեղրգ Ե. Սուլթանց եւ Արշարունի

Նոյն տարին եւ նոյն ամսուն
1911-ի գեկտեմբերին ընտրուած
են էին երկուքը՝ Ամենայն Հայոց *S.*
S. Գէորգ Ե. Սուրենեանց Կաթողիկոսն ու *Կ.Պոլատյ Յովհաննէս Արշարունի Պատրիարքը:* Վատթարացող
քաղաքական կացութեան դիմաց
Արշարունի եղաւ քաջարի եւ
փնտուեց դիւանագիտական ուղիներ
զաւառի հայութեան բարուքումին համար, երբ տակաւին
թարմ էին դժբախտ հետեւանքները 1909-ի Ատանայի կոտորածին
եւ ապարդիւն մնացած նախորդ
տարուած թուրք *Սահմանադրութեան* բարիքները: Եւրոպացիք ալ
տեսած էին որ «Հիւանդ մարդը»
բժշկուելու յոյս չէր ներշնչէր, երբ
իտալիա յարմար պատեհութիւնը
դասած էր 1913-ին Պալքանեան
պետութեանց հետ զինակցաբար
յարձակելու Օսմանեան թուրքիոյ
վրայ:

կական հարցին նկատմամբ, արթ-
ուծեցիս է ու ի անդամները օվականները

Պատրիարք Արշարունի անձնական
նախաձեռնութեամբ խնդրանք կը
ներկայացնէր Գէորգ Ե.Կաթողիկո-
սին եթէ հնար էր Ռուսիոյ ուշադ-
րութեան յանձնել թրքահայոց վի-
ճակը, ներքին գաւառներուն հա-
մար պաշտպանութիւն խնդրելով։
Գրեց իր 1912 սեպտեմբեր 4 թուա-
կիր նամակը Ամենայն Հայոց Հայ-
րապետին ազգին յուսախարու-
թիւնը յայտնելով եւ «սպասելով
ազգովին եւ լի յոյսով որ Օսման-
եան Սահմանադրութեան հռչա-
կումով այլեւ վերջ գտնէր այդ
անլուր չարիքները»։

Սակայն «իրերն եկան հասան ներկայ դառնազին վիճակին, ուր հարկադրուեցանք վարչական պատգամաւորութեան մը հետ դիմել Տէրութեան»: Ի պատսախան Գէորգ Ե. Ամենայն Հայոց Կաթողիկոս իր 26 սեպտեմբեր 1912 թուակիր նամակով կը վստահեցնէր թէ »ինչ որ մեր Հայրապետական պարտքը թելադրում է տանջանքների առաջքն առնելու համար, մենք անշեղ կը կատարենք յօգուտ մեր սիրելի զաւակների«: Կաթողիկոսը կը թելադրէր նաև որ Կ. Պոլսոյ Ազգային Վարչութիւնը վարուէր հեռատեսութեամբ՝ բողոքելով օրինական ձամբով:

Ազգային Պատուիրակութիւն Պօղոս Նուպար՝ Նախագահ

Դիւանագիտ մօտեցումներ եւս
Եկան խնդիրը արծարծելու, այս
անգամ Եւրոպացին, ու Հայրապետն
ու Պատրիարքը զտան ուղին կա-
տարելու իրենց պարտքը։ Ազգը
զայն կը պարտի Արշարունի Պատր-
իարքի դիւանագիտութեան եւ Գէ-
ռորդ Ե. Կաթողիկոսի Հայրապետա-
կան հոգածութեան երբ իսկոյն
Կաթողիկոսի որոշումով Նախ մեր-
ձեցում կատարուեցաւ դէպի Ռուս-
իա, ինչպէս թելադրած էր Արշա-
րունի, եւ ապա Գէորգ Հայրապետ
կը յաջողէր ապահովել Ռուսիոյ
բարեհացակամութիւնը եւ անոր հա-
ւանութեամբ կը կազմէր Ազգային
Պատուիրակութիւնը Փարիզի մէջ՝
նախագահաւութեամբ Պօղոս Նուպար
Փաշացի։

Հայրապետը 1912 նոյեմբեր 8
թուակիր Կոնդակով զինք Պատ-
ուիրակ կը կարգէր Պերլինի դաշ-
նազիրը ստորագրած պետութեանց
մօտ՝ հետապնդելու նպատակով
թրքահայոց բարենորոգումներու
խնդիրը՝ Պերլինի 61-րդ տիրահռ-
չակ լոյտուածի գործադրութեամբ:

Հայրապետի հաւանութեամբ.
Հայրապետի հաւանութեամբ
Ազգային Պատուիրկութեան մաս
կազմեցին Եւրոպայի հայոց հոգե-
ւոր հովիր Գէորգ Եպիսկոպոս
իւթիւննեան, Եազուալ Արթին, Մի-
նաս Զերազ եւ Յարութիւն Մու-
տիչեան: Միաժամանակ Եւրոպա-
կան հայաբնակ կեղրոններու մէջ
կազմուեցան հայկական յանձնա-
խումբեր իրենց օժանդակութիւնը
բերելու համար Ազգային Պատ-

Ոսմանեան պետութենէն ներս
Արշարունի Պատրիարքն ու Հա-
յոց պատրիարքարանը Պատուի-
րակութեան նկատմածը խորհր-
դատուի դերը կատարեցին՝ բա-
նակցութեածը Կ. Պոլասյ օտար
դեսպանութեանց հետ։ Պատրի-
արքը հետամուտ եղած է ազգու-
դիմումներ ու բողոքներ բարձ-
րացնել օգտուելով պետութեան
ներքին վարչական փոփոխութե-
նէն եւ Պալքանեան պատերազմի
հետեւանքով եւրոպական պե-
տութեանց Արեւելեան Հարցը լու-
ծելու համար իրենց կատարած
ջենաժամկետ մէջ համարակալու

ՆՈՐ ԳԻՐՔ՝ ԱՄԵՆԱՊԻՇԻՄ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ՀԱՍՎԱՐ

«Օ, զրբերի աշխարհը-տիեզերքի անեղոք-:
Սյդ գրբերը խոնի ամրոցներ են գոյած,
Եւ կը բացուեն ո՞ն դէմ, երէ լինես անահ»:

Ե. Զարենց

ՀԱՅԿԱՆՈՒԾ ՄԵՍՐՈՊԵԱՆ
Բանաս. գիտութ. քեկնածու,
դրցենտ

Մարդն ի ծնէ զրքամէր է:
Աշխարհի հետ ծանօթութիւն հաս-
տառող իւրաքանչիւր մանկան
համար ուշագրաւ ու հետաքրքիր
են զրքերը: Նախ՝ նշխշան թղթերը
պատող երեխային ոգեւորում է
իր խսկ թաթիկների զօրութիւնը,
խսկ պառտուող թղթերի ձախնը նա
որոնում ու այդպէս էլ չի կարողա-
նում բռնել: Փոքրիկը գունազարդ
զրքերում տեսնում է իրեն շրջա-
պատող աշխարհը, ծանօթանում
շատ ու շատ անծանօթների հետ:
Խսկ երբ սկսում է տառերը իրար
ծիացնել, երեխան դառնում է ու-
շիմ ընթերցող ու կարդում է աչքին
զարնող ամէն մի գիր: Մանկան
ամենահետաքրքիր խաղալիքներն
են դառնում «մեզ աշխարհի մա-
սին պատմող բազմապիսի զրքե-
րը»:

Հրաշամիտ բայլիկներին՝ ամե-
նառուշիմ ընթերցողներին է հասցէ-
ազրուած Նեկտար Պօղոսեանի
«Մանչուկն ու Լուսինը» մանկա-
կան բանաստեղծութիւնների ժո-
ղովածուն, որը, ինչպէս Եղիշէ Զա-
րենցն է ասում, կարող է գոյուել
ամէն մանկան ինչպէս ձեռքեր ու
նրա առջեւ անեղոք տիեզերքի մէջ
մի փոքրիկ պատուհան բացել:

Գիրքը բացում է հեղինակի
մայրագործ խօսքով՝ ուղղուած իր
միրելի ընթերցողներին. «Իմ շատ
միրելի՝ փոքրիկ բարեկամ, այս



գիրքը ցանկանում եմ նուիրել
քեզ, որ դու մինչեւ տառածանաչ
դառնալը քո հարազատների օգ-
նութեամբ ճանաչես քեզ շրջապա-
տող աշխարհը, ծանօթանաս կեն-
դանիների վարքագծին, ընութեան
երեւոյթներին, իսկ երբ դպրոց
զնաս, միրես քո մայրենի լեզուն,
քո հայրենիքը եւ մեծանալով լինես
ազնիւ, բարի, աշխատասէր, ընկե-
րասէր, ընթերցամէր եւ ամենակա-
րեւորը՝ լաւ մարդ»:

«Մանչուկն ու Լուսինը»
գրքովկը ճառագում է Շուշանիկ
իսպիրեանի ակնահածոյ նկարա-
զարդումներով եւ ստիպում ման-
չուկին անհամբերութեամբ թեր-
թել այն ու կարդալ կամ կարդալ

տալ: Ուսանաւորների գլխաւոր հե-
րոսը հայրենիքն ու հայրենի բնու-
թիւնն է՝ բուսական ու կենդանա-
կան աշխարհի հարազատ ու անծա-
նօթ ներկայացուցիչներով: Գրքի
հեղինակը խօսեցնում է թուշուննե-
րին, մտերիմ կենդանիներին,
անուշահամ պատուղներին ու բազ-
մաբոյէտ ծաղիկներին:

Ծիլ ու ծաղիկ, շող ու շաղիկ,
ձերմակ ձիւնից ծնուած ծա-
ղիկ,

Նորեկ գարնան գոհար ցողիկ,
Քնքուշ ծաղիկ, իմ ճնծաղիկ:
Բնութեան ձայները կանչող
ու լսելի են: «Գարուն», «Ձնծա-
ղիկ», «Աքլորիկիկ», «Մարգահաւ»,
«Արտոյոցը», «Կօշկակար կատուն»,
«Թիթեռ» եւ առինքնող միւս վեր-
նագրերի տակ ամփոփուած են
նախադպրոցական եւ տարրական
դասարանների երեխաններին բա-
րեկրթող, ազնուացնող, դաստիա-
րակիչ տողեր:

Օրինակ, «Աղջիկն ու ծաղի-
կը» ուսանաւորում պատկերուած է
մտահոգ մի աղջնակ, որը մտերմիկ

զրոյցի է բռնուում սարի ծաղիների
հետ եւ հարցում է անուած նրանց
առօրեալից:
Ո՞վ է ջրում տունկոր փոքրիկ,
Ո՞վ է քնքուշ քեզ համբու-
րում,
Ո՞վ է մեղմիկ այսդ շոյում,
Կախարդական հեքիաթ պատ-
մում:

Գրքում առանձնակի տեղ են
զբաղեցնում Հայաստան հայրենի-
քին, մայրենի լեզուին, մաշտոցա-
շունչ գրին ու գրքին նուիրուած
ուսանաւորները, կեանքում իւրա-
քանչիւր մարդու անհրաժեշտ
խրամները, որոնք բարութիւն, պա-
տասխանատվութեան զգացում,
կարգապահութիւն, ուղղամտութիւն
աշխատասիրութիւն են մերժանում:
Գիրքը երաշխաւորուած է ՀՀ
կրթութեան եւ գիտութեան նա-
խարարութեան կողմից՝ որպէս ու-
սումնաօժանդակ ձեռնարկ նա-
խադպրոցական հաստատութիւնն-
երի սաների եւ տարրական
դասարանների աշակերտների հա-
մար:

ԱՐՏԱՍԱՇԱՆԻ ԼԻԲԱՆԱՆԻՆԵՐՈՒ ՈՒՃԱՐՈՐՈՒԹԵԱՆ

Ստորեւ կը հաստարակենք Լոս Անձելոսի Լիբանանի աւագ
հիւպատոս ծոնի հպարահիմի հետեւեալ շրջաբերականը, Լիբանա-
նի յառաջիկայ երեսիփանական ընտրութեանց վերաբերեալ:

2013 թուականին Լիբանանի մէջ կայանալիք երեսիփանա-
կան ընտրութեանց որպէս նախապատրաստութիւն Լոս
Անձելոսի Լիբանանի աւագ հիւպատոսութիւնը՝ այս շրջանի
բոլոր լիբանանցիներուն կը յիշեցնէ որ իրենց անունները պէտք
է արձանագրել տան 2013 թուականի երեսիփանական ընտրու-
թիւններու ընտրացուցակին մէջ: Այս մէկը պէտք է կատարուի
Դեկտեմբեր 31, 2012-էն առաջ, անձամբ ներկայանալով հիւպա-
տոսարանի գրասենեակը ստորագրութեան համար եւ կամ
թղթատարով առաքել ամերիկեան նոտարի մօտ ստորագրելէ
ետք, որուն պէտք է ընկերակցի անցագրի կամ անձնաթուղթի
պատճէնը: Յաւելեալ տեղեկութեանց համար կարելի է կապ
հաստատել էլեկտրոնային հասցէով www.lebanonconsulatela.org
կամ հեռաձայնել ընդհանուր հիւպատոսութեան գրասենեակը
հետեւեալ հեռախոսահամարին 213-243-0999:

ՀԵՌԱՋԵՆ ԽԻՉԱԿԻ ՅԱՆԱԿՈՒ

ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

SOCIAL DEMOCRAT HUNCHAKIAN PARTY

Ճաշկերոյթ Պարահանդէս եւ Ազգային Երգերու Երեկոյ

Նուիրուած Ս.Դ.Հ.Կ 125 Ամեակին

DINNER DANCE & PATRIOTIC SONGS

DEDICATED TO 125th ANNIVERSARY Of S.D.H.P.

PRESENTED BY GAYDZ YOUTH ORGANIZATION

SPECIAL GUEST SINGER

From London

SAMVEL VARDANIAN

Տեղի կ'ունենայ Շաբաթ, Սեպտեմբեր 22, 2012

SATURDAY SEPTEMBER 22, 2012

AT AMBROSIA BANQUET HALL

6410 SAN FERNANDO RD. GLENDALE, CA 91201

Ժամը 8:30 էն սկսեալ STARNING AT 8:30 P.M.

Մուտքի նույը՝ DONATION \$65.00

FOR TICKETS & MORE INFORMATION
CALL KARINE 818-324-0574 or GARINE 626-755-4773

125



Կազմակերպութեամբ՝ ԿԱՅԾ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Մասնակցութեամբ՝ Լոնտոնէն Սիրուած Երգիշ
եւ ազգային Երգերու մեկնաբան՝

Սամուէլ Վարդանեանի

Տեղի կ'ունենայ Շաբաթ, Սեպտեմբեր 22, 2012

SATURDAY SEPTEMBER 22, 2012

AT AMBROSIA BANQUET HALL

6410 SAN FERNANDO RD. GLENDALE, CA 91201

Ժամը 8:30 էն սկսեալ STARNING AT 8:30 P.M.

Մուտքի նույը՝ DONATION \$65.00

FOR TICKETS & MORE INFORMATION
CALL KARINE 818-324-0574 or GARINE 626-755-4773

Փիթքը ՊԱԼԱԳԵԱՆԻ «ԲԱԿԱՏԱԳՐԻ ՍԵՒ ՇՈՒՆՉ»

Ծարունակուած էց 13-ին

Նիքը մետաքսի առեւտուրի մէջ
եղած է թուրքիոց մէջ եւ շարունա-
կած Նիուճըզիի մէջ։ Մետաքսի
առեւտրական գործառնութեան մէջ
յաջողած էր յատկապէս Պետրոս
Արուսեանը, որ Նաֆինա մէծ մօր
երկրորդ ամուսինն էր։ Ան շարու-
նակեց իր գործը Նիուճըզիի մե-
տաքսի գործարաններուն հետ գոր-
ծակցաբար։ Փիթըրի մօրաքոյրնե-
րը Կլատիս եւ Լիւսիլ նշանաւոր
«Wall Street»ի առեւտրական գոր-
ծարաբներ էին։

Յուշերու այս գրքին ամենաայտկանչական վաւերագրութիւնը՝ Պալագեանի մեծ մօր Նաֆինալի բողոքագիրն է 1920 թուականին, հասցէագրուած թուրքիոց կառավարութեան։ Պաշտօնական մանրամասնեալ կնիքներով եւ տուեալներով այս փաստաթուղթը երեւոյթ էր իր ժամանակին համար։ Զարմանալիօրէն այս բոլորի մասին, նաեւ Նաֆինա մեծ մօր գերդաստանի ջարդերուն մասին երբէք խօսուած չէր Պալագեաններու տան մէջ, բոլորովին զաղսնի պահուած էր այս իրականութիւնը։ Սոյն փաստաթուղթին մէջ Նաֆինան ընդգրկած էր ցանկը իրենց ունեցած կալուածներուն, ինչքերուն, առեւտրական գործառնութեանց։ Նոյնիսկ մահացածներէն եղած գոհարեղէններու կողոպուտը նշած էր մէկ առ մէկ։ Իր միտք բանին այն էր որ Նաֆինան որպէս մարդ էակ միջազգային օրէնքի ենթակայ է եւ իրաւունք ունի պահանջելու իր ստացուածքները։ Անշուշտ թրքական իշխանութիւնները չպատասխանեցին այս դիմումնագրին։

Հուռթեամբ եւ անտարբերութեամբ վերաբերեցաւ թուրքիան այս արդար հատուցման դիմում-նազրին: Այդ օրերուն չկային ընկերացին եւ քաղաքական կազմակերպուած կառուցներ պաշտպանելու համար Նաֆինային եւ իր նման վերապրողներու արդար դատութեամբ Նաֆինայի արդարութեան պահանջքի աքտը անձնական, հաւաքական հոգեկան եւ քաղաքական գետնի վրաց մեծ նշանակութիւն ունէր: Նախճիրի եւ քասոսի ժամանակաշրջանին մէջ եղած քաջութեան արարք մըն էր խոր ինքնավտահութեամբ առլցուն: Նաֆինայի պահանջատիրութիւնը անձնականէն անդին անցնելով կը համնէր մարդկակային իրաւունքներու հարցին: Ան այս դիրքորոշումը ունեցաւ Միացեալ Ազգերու Կազմակերպութենէն շատ առաջ, ըստ որու անոնք կ'արգիլէին մարդկութեան դէմ գործադրուած բոնութիւնները, անգութ, անմարդկային եւ նաևմացուցիչ վերաբերմունքը:

Նախինան հին աշխարհէն նոր
աշխարհ տեղափոխեց իր ձայնը եւ
վկայութիւնը: Ամերիկայի Նիու-
Օրգի Նահանգմին մէջ ընկերային
եւ քաղաքական միջավայրը ձեռն-
տու չէր ացդ արդար ձայնը լսելի
դարձնելու համար: Այդ պատճա-
ռաւ ալ ան համոզուեցաւ, որ բացի
լուութենէն կարելի չէ տիրանալ ոչ
արդարութեան եւ ոչ ալ հասուցու-
մի: Ան կեանք մը կը սկսէր,
խորունկ վիշտը հոգիին մէջ թա-
ղած եւ լուութեան պատճուճանը
հագած:

Հայկական ցեղասպանութեան
ուրացումը թուրքիոց կողմէ զլիսա-
ւոր տեղ կը գրաւէ այս հասորին

մէջ: Կարելի՞՛ է որեւէ զոհ հաշտուի իր անցեալին հետ, առանց ոճրագործին կողմէ իր յանցանքը ընդունուելուն: Կարելի՞՛ է ներել առանց յանցաւորին կողմէ ներողամտութիւն խնդրուելուն եւ առանց արդարութեան հաստատման՝ ի խնդիր եղած արարքներուն: Ուրացումի հիւանդագին արտայացութիւն մընէ մեղադրել զոհը գործուած ոճիրին համար: Զոհերու հոգեկան բուժումը կ'ուշանաց երբ ոճրագործը հետամուտ է արարքներու, անպատճի մնալու դիտաւորութեամբ: Ճիշդ է նաև այն վարկածը, որ ցեղասպանութեան ուրացումը նոր ցեղասպանութեանց պատճառը կը հանդիսանալի: 1939-ին Հիթլէր ժամանակը յարմար նկատեց ուրիշ ցեղասպանութիւնն մը կազմակերպելու, քանի որ հայկական ցեղասպանութեան մասին աշխարհէ չէր խօսած եւ դատապարտած:

Ցեղասպանութիւնը ուրացող-
ները շատ բնականօրէն կ'ուզեն
անտեսել արխիւներ եւ զանոնք
նկատել ամճիշդ. սուտ եւ սիալ:
Անոնք կը մերժեն նոյնիսկ պրատել
պատերազմական իրենց դաշնա-
կիցներու արխիւները, ինչպէս Գեր-
մանիոյ եւ նոյն ժամանակաշրջա-
նին մէջ հրատարակուած Ամերի-
կացի դիւնագէտներու, Միսիո-
նարներու եւ վերապրողներու վկա-
յութիւնները: Զոհերը կ'ակնկալեն,
որ ակալեմականներ վերցնեն պա-
տասխանատուութիւնը անաչառո-
րէն ներկայացնելու պատմութիւնը:
Անոնք պէտք չէ օգտագործուին
ոճրագործ կառավարութեան մը
սադրանքներէն, որոնք կը միտին
իրենք զիրենք անպարտ արձակել
գործուած հաւաքական ոճրային
եղեռնագործութենէն: Հարկ է զա-
նազանութիւն դնել ճշմարիտ եւ
վաւերական բանասիրական տու-
եալներու եւ աղաւաղուած անճիշդ
ու սիալական ապամութեան ոն-

թացքին ցեղասպանութիւն գործադրած թուրքիոյ առհաւական մեղքին: Կ'ակնկալուի միջազգային կատուցներէն ու քաղաքակիրթերկիրներէն բարոյական քաջ կեցուած քներ: Անոնք պարտին անհրաժեշտ դիրքորոշումներով ցոյց տալու իրենց զատապարտումը թէ՛ օրէնքի սահմաններուն մէջ եւ թէ՛ գործնական պատիճներ որդեգրելու ողղութեամբ: Հստ թուրք Ամերիկաբնակ քաղաքացիի մը, ցեղասպանութեան 81-րդ տարելիցին առիթով կը յայտնէր քաջաբար թէ պատժութիւնը կըսպասէ թուրք ղեկավարի մը, որ ճանչնայ իր նախնիքներուն կատարած ամենամեծ ոճիրները, ներողութիւն ինդրէ հայ ժողովուրդին եւ ջանայ զանոնք նիւթապէս եւ բարոյապէս հատուցանել աշխարհի աչքին առաջ:

Անցնող տամաժեակներու ընթացքին Յիշատակի ոգեկոչումները աշխարհի մէն մի անկեան մէջ, ուր հայեր կ'ապրին, դարձած են սրբազն պարտականութիւն ցեղասպանութեան զոհերուն հոգիներուն համար: Կորուստին ցաւը կ'իմաստաւորուի զայն լիշելով եւ ոգեկոչելով: Ոգեկոչումը ծէս մըն է թաղելու մեռեալները, որոնց մարմիները շիրիմ չունեցան: Վերապրողներու առաջնահերթութիւնն է իրենց կորուսեալ հայրենակիցներուն քաղաքակրթութեան վերադարձը յատուկ հաւաքական արարողութիւններով: Այս ձեւով զոհերու վիշտը կ'օրինականացուի, մաս-

ուան ուրուականը կը թեթենայ եւ
անոնք կը գտնեն իրենց յաւհտենա-
կան հանգիստը արժանապայիլ կեր-
պով։ Երբ աւելի մեծ հաւաքակա-
նութեան մը հետ կը բաժնուի ցաւն
ու վիշտը, այն ատեն միայն կարելի
է յոյս, հաւաքական կամք եւ փրկու-
թիւն իրականացնել։

«Times Square» Մէնէթընի

մէջ տեղի ունեցած ողկոչումի ձեռնարկին որպէս բանախօս, Փիթըր Պալագեան կ'արտաքայտէ իր ցատումը իր ժողովուրդի հանդէպ գործադրուած խժուժութիւններուն նկատմամբ։ Ան կ'ընդունի որ Մակի ցեղասպանութեան տարագումէն ու սահմաններէն 10 անգամ աւելի էր ինչ որ պատահեցաւ 1915 թուականին Անատոլիայի մէջ։ Ան կը յարէ, «թուրքերը այսօր կ'ըսեն ինչ որ պատահած է, հայեր պարտին այդ վայրագութեան հետ հաշտուեն»։ Թուրքերը կազմակերպութեան

ուիլ»։ Խուրք կառավարութեան միտք բանին այն է որ իրենք ամէն բան պիտի ընեն իրենք զիրենք ազատ կացուցանելու համար այդ ոճիրէն։ Անոնք կ'ուզեն լոեցնել զոհերն ու անոնց ժառանգորդները։ Ամերիկացիք պարտին ոչ ըսել թրքական ծիգերուն, զոր կը ծառացէ ծածկելու հայկական ցեղասպանութիւնը։ Պալագեան կը դատապարտէ այն ակաղեծականները, որոնք կը կաշառուին թուրքիոյ կողմէ ուրանալու համար ցեղասպանութիւնը եւ զայն ոչնչացնելու մարդկացին յիշողութենէն։ Փրինսթըն համալսարանի միջին Արեւելքի բաժանմունքին եւ Ամերիկեան կառավարութեան միջեւ սկսուած զործակցութիւնը ցեղասպանութեան ուրացման համար, մղեց հարիւրաւոր մտաւորականներ, մածուլի գործիչներ, գրողներ, արուեստագէտներ, ակաղեծականներ հայ եւ ոչ հայ հեղինակաւոր անձնաւորութիւններ որ ստորագրեն բողոքագիր մը վերջ դնելու համար թուրք կառավարութեան բոնութեան յատկապէս Ամերիկեան համալսարաններու եւ հաստատութիւններու վրայ։

Հազարամեկակներու պատմութիւն ունեցող հայ ժողովուրդը իր բնաշխարհէն քցուած, սպաննուած, ջարդուած է: Իր դարերու ընթացքին շինածը գրաւուած ու քանդուած է: Թուրքիան ոչ միայն մարդկային իրաւունքներու բռնաբարձան կերպոն է, այլ վայր մը ուր չկան ինքնաքննադատութեան եւ

ինքնարժեւորման միջոցառումները:
Ցեղասպանութեան յաջորդող շրջա-
նը անոնցմէ մէկն է: Թրքական
դպրոցներու մէջ կը սորվեցնեն թէ
հայերը դաւաճաններ են, որոնք
թուրքեր սպաննեցին եւ արժանի
են իրենց հանդէպ եղած վերաբեր-
մունքին: Քարտէմներու, զբօսաշր-
ջիկութեան յայտարարութիւննե-
րու եւ համայնագիտարաններու
մէջ Հայաստան բառը գոյութիւն
չունի: Հայկական եկեղեցիներու,
հաստատութիւններու կառուցնե-
րու ցուցադրման մէջ հայ բառը
չօպտագործուիր: «Անի» քաղաքի
անունը չիշատակուիր:

Փիթըր Պալագեան «Ճակատագրի Սեւ Շունը» հասորին մէջ յատուկ ուշադրութիւն դարձուցած է Հաւաքական լիշողութեան, պատմական ցաւալի անցեալի վէրքերուն եւ հոգեկան խոր դառնութեանց իւրայատուկ արտայատչածնեւերուն: Այս հասորով Պալագեան իր բանաստեղծական ոլորտէն խոստում մը կը կատարէ դէպի պատմողական գրականութիւն, որուն համար կը տրամադրէ 7 տարիներ: Այդ տարիներու ընթացքին ան անձնական պրատումներով լոյսին բերած է ծանօթութիւններ մուլթ պատմութեան մը մասին, որուն շուրջ իր ընտանիքը կատարեալ գաղտնապահութիւն պահած էր: «Ճակատագրի Սեւ Շունը» հասորը լոյս տեսաւ առաջին անգամ 1997-ին «Best Seller»ի հրատարակութեամբ, որմէ վերջ ան արժանացաւ բազմաթիւ վերահրատարակութիւններու: Հասորին գոտած ընդունելութիւնը աննախընթաց էր միջազգային շրջանակներուն մէջ: Բացի Անգլիագիր բանաստեղծական հասորներէ, Պալագեան հեղինակն է «Այրուող Տիգրիսը Հայկական ցեղասպանութիւնը եւ Ամերիկայի վերաբերմունքը» արժէքաւոր ուսումնամիջութիւնը հրատարակուած 2003-ին: Ան, Անգլերէնի թարգմանած է նաև Գրոգորիս եպիսկոպոս Պալագեանի «Հայկական Գողգոթան» Փիթըր Պալագեան հեղինակութիւն է Հայկական ցեղասպանութեան հետ առնչուող նիւթերու: Ան կը հրաւիրուի դասախուութիւններ կարդալու, հարցազրուցներ տալու եւ ակտիւորէն կը բերէ իր նպաստը հայոց իրաւունքներուն վերաբերող հարցերու լուսաբանման եւ միջազգայնացման մէջ:

ՅԱԿՅԱԿԱՆ

ՄԱՐԻ ՀՅՒՅՏԵԱՆԻ մահուան տիսուր առիթով ՆՍՍՄ-ի վարչութիւնը իր խորազգաց վշտակցութիւնները կը յացնէ հանգուցեալի ընտանիքին, հարազատներուն եւ բոլոր մերձաւորներուն, ինչպէս նաև Պէջլանի Հայրենակցական Միութեան Վարչութեան:

ԱՐԵՎՈՐՈՒՄ

Եթե ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր,
եւ կը ցանկաք զանոնք նուիրել
Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝
հաճեցէք կապ պահել մեզի հետ:
G.Y.O. 1060 N. ALLEN AVE.
PASADENA, CA 91104

«ՔԱԶ ԱԼԵՎ»

በኢትዮጵያ ከዚህኑን ስነ

ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ



FESTIVAL

SUNDAY SEPTEMBER

16, 2012

VERDUGO PARK
GLENDALE

621 Cañada Blvd. Glendale, CA 91208

Starting at 11:00 am



Կազմակերպութեամբ Organized By

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

Live Music

ԵՐԳ ՈՒ ՊԱՐ

Dancing

ԱՐՈՒԵՍԻ ԳՈՐԾԵՐ

Art Work Exibition

ՓՈՔՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ

Kids Games

ՀԱՍՏԱՍ ՃԱՇԵՐ

Armenian Food

To reserve your vender booth
please call Nor Serount Cultural Association

ԶԵՐ ԿՐՊԱԿՆԵՐԸ ապահովելու համար

Հեռաձայնեցէք Նոր Սերունդ Մշակութային Միութեան

(818) 391-7938



Sponsors



ARMENIAN MEDIA GROUP OF AMERICA INC.



www.massispost.com



Glendale West Pharmacy
and
Medical Supply



Great Tasting Natural & Organic Foods

ԹԱՄԱՐԱԼ

ՍԱՐԿԻՍ
ՊԱՍՏՐԻ